




ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՍԻԱՃՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄԵԿՎՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿԵԱԲԱԹԱԹԵՐԹ

Ամենայն Հայոց Կաթողիկոսի այցը Իսալիա



Նոկտեմբերի 5-ին Ն. Ս. Ս. Ս. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը մեկնեց Հռոմ (Իտալիա)՝ մասնակցելու Սանտ Էջիդիոյի համայնքի կողմից կազմակերպված «Մարդիկ որպես եղբայրներ եւ երկրի ապագան. կրոններն ու մշակույթները երկխոսության մեջ» խորագրով երկօրյա (հոկտեմբերի 6–7) համաժողովին եւ միջեկեղեցական աղոթքին։ Համաժողովին Նորին Սրբությունը հանդես եկավ բանախոսությամբ, քարոզեց միջեկեղեցական աղոթքի արարողությամբ։

Նորին Սրբության պատվիրակության կազմում էին Արեւմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ եւ Վատիկանում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի պաշտոնական ներկայացուցիչ հաժակ արք. Պարսամյանը, Մայր Աթոռի լուսարարապետ Մուշեղ եպս Բաբայանը, ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Արման Թաթոյանը, Քարոզչական կենտրոնի եւ Մայր Աթոռում գործող Արցախի հոգեւոր-մշակութային ժառանգության պահպանության գրասենյակի տնօրեն Գարեգին վրդ. Համբարձումյանը եւ Վեհափառ Հայրապետի գավազանակիր Ամանիա արք. Ծատուրյանը։

Համաժողովին եւ միջեկեղեցական աղոթքին իր մասնակցությունը բերեց նաեւ Կ. Պոլսի Հայոց Պատրիարք Սահակ արք. Մաշալյանը։

Հանուն խաղաղության եւ երկխոսության այս միջազգային հավաքը 1986 թ. սկսած կազմակերպում է Կաթողիկ եկեղեցու հովանու ներքո գործող եւ աշխարհականներից բաղկացած Սանտ Էջիդիո համայնքը։



Հոկտեմբերի 6-ին Ն. Ս. Ս. Ս. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Վատիկանում հանդիպում ունեցավ Հռոմի Սրբազան Քահանայապետ Ֆրանցիսկոս Պապի հետ։ Զրույցի ընթացքում Վեհափառ Հայրապետն անդրադարձավ 44-օրյա պատերազմի աղետալի հետեւանքներին, Հայաստանի եւ Արցախի առջեւ ծառացած ներկայիս մարտահրավերներին՝ հատկապես շեշտադրելով ռազմագերիների եւ հետապնդվողների շրջանում գերության մեջ հայտնվածների վերադարձի խնդիրը։ Նորին Սրբությունը նաեւ շնորհակալություն հայտնեց Սրբազան Քահանայապետին՝ պատերազմի

ընթացքում հայ ժողովրդին եւ Հայաստանին ցուցաբերած աջակցության համար։ Հանդիպման ավարտին Հռոմի Քահանայապետն իր օրհնությունը բաշխեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի պատվիրակության անդամներին։

Այնուհետեւ Ամենայն Հայոց Հայրապետի գլխավորած պատվիրակությունը հանդիպում ունեցավ նաեւ Վատիկանի պետքարտուղար կարդինալ Պետրո Պարոլինի հետ։ Զրույցի ընթացքում անդրադարձ կատարվեց արցախյան 44-օրյա պատերազմից հետո տարածաշրջանում ստեղծված իրավիճակին։ Մասնավորապես արծարծվեցին Արցախի ժողովրդի անվտանգությանը, Հայաստանի ինքնիշխան տարածքների նկատմամբ ունեցվող ռազմական, ինչպես նաեւ Ադրբեջանի վերահսկողության տակ անցած տարածքներում հայկական հոգեւոր-մշակութային ժառանգության պահպանմանը վերաբերող հարցեր։ Առկա մարտահրավերների եւ խնդիրների

հաղթահարման գործում Ամենայն Հայոց Կաթողիկոսը մեծապես կարեւորեց միջազգային համրության դերակատարությունը։

«Մարդիկ որպես եղբայրներ եւ երկրի ապագան. կրոններն ու մշակույթները երկխոսության մեջ»

միջազգային համաժողովին Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդես եկավ բանախոսությամբ։

Վեհափառ Հայրապետը, ողջունելով համաժողովի մասնակիցներին, իր օրհնությունն ու գնահատանքը բերեց կազմակերպիչներին եւ մասնաձեռնողներին։

«...Հակառակ պատմական տարբեր փորձառությունների, առկա կրոնական, մշակութային եւ աշխարհընկալման տարբերությունների՝ մենք բոլորս մեկ Աստծու զավակ ենք, եղբայրներ եւ քույրեր՝ միավորված Աստծու սիրով։ Եվ հենց այս բազմազանության մեջ մեր սիրո միությունն է՝ Աստծու զավակ լինելու վավերական վկայությունը։ Աստծու ամենախնամ սիրո գիտակցումն է փոխըմբռնման հիմքը, եւ համոզումը, որ բոլոր մարդիկ, իբրեւ Աստծու զավակներ, կրողն են Ամենակալի կողմից շնորհված խաղաղ, ազատ ու անկախ կյանքի սրբազան իրավունքի։ Այս ընկալումներին հակադրվող քայլերն են նեղացնում միմյանց առավելագույնս ճանաչելու եւ հասկանալու հնարավորություններն ու հորիզոնները, փակում նույն Աստծու կողմից արարված մարդկանց սրտերն ու մտքերը, աչքերն ու ականջները՝ դարձնելով նրանց

անտարբեր միմյանց ցավի ու դժբախտության, նեղությունների եւ համամարդկային հիմնախնդիրների նկատմամբ։ Աստվածատուր այդ սիրո եւ եղբայրության մեջ տեղ չունեն թշնամանք ու անհամերաշխություն, որոնք այսօր էլ շարունակում են փորձության մեջ պահել մարդկային հասարակությունը՝ պատերազմներով ու ահաբեկչություններով, նաեւ կրոնական ատելությամբ ու խտրականությամբ։ Մեր եղբայրներից եւ քույրերից շատերն աշխարհում ամեն օր ենթարկվում են տիրապետելու մոլուցքից, անարդարությունից ծագող բռնության տարբեր դրսևորումներին, որոնք ստեղծում են ատելություն ծնող հոգեւոր ամայություն։ Ցե-

ղասպանություն վերապրած Մեր ժողովրդի պատմության էջերը գրվել են հաճախ նահատակների ու հավատի վկաների արյամբ։ Հետեւաբար, լավ գիտենք արժեքը սիրո, եղբայրության, ժողովուրդների բարեկամության, խաղաղ ու ապահով կյանքի։ Եվ սրտակից ենք մեր եղբայրների ու քույրերի տառապանքներին, քանզի սուրբ Պողոս առաքյալի խոսքով՝ Աստված «մեկ արյունից ստեղծեց մարդկանց բոլոր ազգերը, որ բնակվեն երկրի վրա» (Գործք առաք. 17. 26)»,- նշեց Վեհափառ Հայրապետը։

Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր խոսքում անդրադարձ կատարեց նաեւ անցյալ տարի մեր ժողովրդին պատուհասած աղետալի փորձությանը՝ Արցախի Հանրապետության դեմ Ադրբեջանի կողմից սանձազերծված պատերազմին, կրած ծանր կորուստներին եւ պատերազմի հետեւանքներին։

Ներկայացնելով տիրող տագնապալի իրավիճակը՝ Նորին Սրբությունը մասնավորապես խոսեց ռազմագերիների խնդրի մասին. «...Գերեզմարվեցին շատերը, եւ խաղաղ բնակիչներ, որոնք այսօր շարունակում են ենթարկվել նվաստացումների ու աննկարագրելի խոշտանգումների՝ հակառակ միջազգային հանրության, եկեղեցական կառույցների եւ մարդասիրական կազմակերպությունների կողմից ազատ արձակման վերաբերյալ հնչող հարատեւ կոչերի։ Ցանկանում ենք արձանագրել, որ պատերազմական գործողությունները ոչ միայն ողբերգություն դարձան մեր ժողովրդի, այլեւ հենց պատերազմը սանձազերծած երկրի՝ Ադրբեջանի համար, որը նույնպես կրեց մարդկային



ծանր կորուստներ։ 44 օր տեւած արյունալի պատերազմը հնարավոր եղավ դադարեցնել Ռուսաստանի Դաշնության միջնորդմամբ մեծահարգ տիար Վլադիմիր Պուտինի ջանքերի շնորհիվ։ Հավատում ենք, որ ԵԱՀԿ Մինսկի խմբի միջնորդական առաքելությամբ կկարգավորվի Արցախի կարգավիճակի հարցը։ Ադրբեջանի ագրեսիան Արցախի Մեր զավակների նկատմամբ եւ նման ռճրագործությունները այլ ազգերի հանդեպ, անտարակույս, խստորեն պիտի դատապարտվեն ողջ միջազգային հանրության կողմից, որպեսզի այդպիսի ողբերգություններ չկրկնվեն ժողովուրդների կյանքում»։

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդգծեց, որ այսօր համընդհանուր գործակցության ու ջանքերի կարիք է զգացվում՝ բարեկարգելու համար մեր ընդհանուր տունը՝ երկիր մոլորակը, որպեսզի այնտեղ տիրապետող լինի եւ դեպի երջանկաբեր կարգավորումներ առաջնորդի խաղաղությունը՝ մեր Փրկչի պատգամի համաձայն. «Իբրա հետ խաղաղությամբ ապրեք» (Մարկ. 9. 49)։

«...Հեշտընթաց չեն փոխըմբռնման ու փոխճանաչողության վրա հիմնված խաղաղության ճանապարհները, բայց միշտ՝ հնարավոր, եթե կան ազնիվ ու մաքուր հոգով համամարդկային բարօրությանը, խաղաղ ու ստեղծագործ կյանքի ծառայելու կամքը, ձգտումը»։

Աշխարհի չորս անկյուններում ապրող մեր ժողովուրդի զավակները տարբեր ազգերի հետ խաղաղ համակցությանը լավագույն վկայությունն են բերում մշակույթների եւ կրոնների երկխոսության, եւ հավատում ենք, որ միմյանց նկատմամբ ազնիվ եղբայրասիրությամբ ու համատեղ ջանքերով իրականանալու է մարգարեական խոսքը,

Ամենայն Հայոց Կաթողիկոսի այցը Իսալիա

երբ ազգերն «իրենց սուսերներից խոփեր պիտի ձուլեն եւ իրենց սկիներն իրենց մանգաղներ» (Ես. 2. 4):

Մենք աղոթում ենք, որ բացվեն բոլոր մարդկանց սրտերն ու մտքերը՝ մարդկության կյանքի նորոգման համար մարդուն վերահաստատելով Աստծուն արարչակից լինելու իր ճշմարիտ կոչման ու նպատակի մեջ», – ասաց Ամենայն

սուս Քրիստոսի խաղաղությունն այլ է այս աշխարհի խաղաղությունից, որը հաճախ կառուցվում է նաեւ անարդարության հիմքի վրա՝ ցավ ու վիշտ բերելով մարդկանց եւ ժողովուրդներին: Ըստ Հայրապետի խոսքի՝ Փրկչի շնորհած խաղաղությունը Աստծու սիրառատ ներկայությունն է մեր կյանքում:

«...Սիրելիներ, միջկրոնական եւ միջմշակութային համաժողովի ավարտին մեր քննարկումներն ու խորհրդածությունները եզրափակում ենք միասնական աղոթքով՝ Կոլիզեոնում, որ դարձել է առաջ դարձավ քրիստոնյա նահատակների առ Աստված ապավինության եւ սիրո վկայության վայր, Քրիստոսի խաղաղության ու մարտիրոսաց զորավոր հավատքի ողջագուրման վկայաբան: Այստեղով՝ խորհրդանշական այս վայրով է ձգվում վաղ քրիստոնեության խաչի ճանապարհը՝ հազարավոր մարտիրոսների ու վկաների արյունով սրբազործված, որն այսօր ամենքիս առաջնորդում է խաղաղության մասին քրիստոնեական ընկալման վերաբերմունք: Նահատակության արյամբ պատկված այս վայրում Քրիստոսի մարտիրոսներն ու վկաները չհուսահատվեցին անասելի չարարանքներից, անձնատուր չեղան խաղաղության մասին այս աշխարհի պատկերացումներին, այլ իրենց արյան հեղուկով հաստատում պահեցին հավատարմությունն առ Աստված, ինչպես հռչակում էր սուրբ Պողոս առաքյալը. «Ո՛չ մահը, ո՛չ կյանքը, ո՛չ հրեշտակները, ո՛չ իշխանությունները, ո՛չ այլ բաներ, որ այժմ կան, ո՛չ զայիքները եւ ո՛չ զորությունները, ո՛չ բարձրություն, ո՛չ խորություն եւ ո՛չ մի ուրիշ արարած չի կարող բաժանել մեզ Աստծու այդ սիրուց, որ կա մեր Տեր Քրիստոս Հիսուսով» (Հռոմ. 8. 37–39):»

Վեհափառ Հայրապետն անդրադարձավ նաեւ 44-օրյա պատերազմի աղետալի հետեւանքներին. «...Մենք գալիս ենք մի երկրից, որտեղ Ամենակալի նախախնամական ձեռքով պատմության ընթացքում ամեն մի քարի ու ավազա-



Հայոց Հայրապետը:

Վերջում Նորին Սրբությունը հայցեց, որ Աստված օրհնի բոլոր ազնիվ ջանքերը՝ հանուն խաղաղության եւ ժողովուրդների համերաշխության:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր պատգամը փոխանցեց Սանտ Էջիդիո համայնքի կողմից կազմակերպված միջեկեղեցական աղոթքին

Հոկտեմբերի 7-ին Հռոմի Կոլիզեոն Ն. Ս. Օ. Տ. Տ. Գաբեգին երկրորդ Ճայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը մասնակցեց Սանտ Էջիդիո համայնքի կողմից կազմակերպված տարեկան ավանդական խաղաղության աղոթքին, որին ներկա էին քույր Եկեղեցիների պետեր, տարբեր երկրների դեկլարանտներ ու պաշտոնյաներ: Հանուն խաղաղության միջեկեղեցական աղոթքի ընթացքում Նորին Սրբությունն իր պատգամը փոխանցեց ներկաներին:

«...Փրկչ մեր Տերը, Վերջին ընթրիքի ժամանակ գիտենալով, որ ժամեր անց պիտի չարչարվեր ու խաչվեր, Իր աշակերտներին տվեց հրաժեշտի պատգամը. «խաղաղություն եմ թողնում ձեզ, Իմ խաղաղությունն եմ տալիս ձեզ. ձեզ չեն տալիս այնպես, ինչպես այս աշխարհն է տալիս. ձեր սրտերը թող չխռովվեն եւ չվախենան» (Հովհ. 14.27):»

Մեր Տեր Հիսուս Քրիստոսի խաղաղության պարգեւը, որ Նա թողեց Իր աշակերտներին շուրջ երկու հազար տարի առաջ, այսօր մեզ է տրված բաշխելու քսանմեկերորդ դարում ապրող քրիստոնյաներին եւ բոլոր մարդկանց հատկապես այս օրերին, երբ բռնություններն ու պատերազմները, էթնիկ խտրականությունն ու կրոնական ծայրահեղականությունը եւ դրանց հիմքի վրա իրագործվող ոճրագործությունները տակավին ավերներ են գործում, եւ աշխարհը կարիք ունի խաղաղության ու ապահով կյանքի վերահաստատման»,- նշեց Վեհափառ Հայրապետը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդգծեց, որ Մեր Տեր Հի-



ստիկի մեջ խտացվել է քրիստոնեական վկայությունը, խաչի ճանապարհը՝ հանուն հարության ու հավատի հաղթանակի, որտեղ լեռներն աղոթքի ամենագոր ուժով վերածվել են խաչքարերի, դաշտերն ու բլուրները՝ սրբազան խորանների, լճերն ու գետերը՝ մկրտության ավազանների՝ որպես հավատարմություն մեր քրիստոնեական հավատքի ու ինքնության: Ազգս հայոց լավ գիտի խաղաղության գինը, որ վճարել ու շարունակում է վճարել: Անցյալ տարի մեր



ժողովուրդը վերստին անցավ խաչի ճանապարհով: Ազատ ու անկախ ապրելու իրավունքը, տերունաշնորհի խաղաղ կյանքը պաշտպանելու համար ազգիս զավակները կրեցին արհաւիրքները Ադրբեջանի կողմից Թուրքիայի օգնությամբ եւ ահաբեկչական խմբավորումների ներգրավմամբ սանձազերծված 44-օրյա պատերազմի»:

Այս ամենայն Հայոց Հայրապետն իր երախտագիտությունը հայտնեց քույր Եկեղեցիներին՝ պատերազմի օրերին անարդարությունն ու եղեռնագործությունը դատապարտելու համար եւ վստահություն հայտնեց, որ առաջիկայում էլ բարձրահունչ պիտի պահեն իրենց ձայնը՝ ընդդեմ արցախահայության անկախ ապրելու իրավունքի նկատմամբ բռնացումի, հանուն գերյալների ազատության եւ Ադրբեջանի վերահսկողության տակ հայտնված տարածքներում հայկական հոգեւոր-մշակութային ժառանգության պահպանման, հանուն տարածաշրջանում կայուն խաղաղության վերահաստատման:

«...Սիրելիներ, այսօր առաքելափիմն եկեղեցիների ներկայացուցիչներն համախմբվել ենք մեր Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի ներկայության մեջ՝ մեր Եկեղեցիների աղոթքներն ու ջանքերը համախմբելու եւ ողջ մարդկությանը համեմատության կոչելու՝ պահելու աշխարհը «յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն» ընթացքի մեջ՝ զերծ առելությունից, թշնամանքից ու հակամարտություններից: Կոլիզեոնի պատմական այս վայրում քաջության եւ անվեհերության պատգամն է փոխանցվում ամենքիս՝ առաքյալների ու աշակերտների նման անհողողող անցնելու խաղաղության առաջնորդող խաչի եւ վկայության տերունահաստատ ուղիով: Այս տեսլականով եւ միասիրտ աղոթքով հայցենք Տիրոջ օգնականությունը խաղաղ ու արդար աշխարհ կերտելու դժվարին ճանապարհին», – պատգամեց Ամենայն Հայոց Հայրապետը:

Արարողության ընթացքում հնչեցին եկեղեցապետերի եւ կրոնական առաջնորդների ուղերձներ: Ավարտին Ֆրանցիսկոս Պապի ուղերձից հետո, ներկաները մեկ րոպե լռությամբ հարգեցին բոլոր պատերազմների զոհերի հիշատակը, ապա երեխաները փոխանցեցին մասնակիցներին խաղաղության ուղերձը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՀՀ-ում Շվեդիայի թագավորության նորանշանակ դեսպանին

Նոկտեմբերի 1-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գաբեգին երկրորդ Ճայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Շվեդիայի թագավորության նորանշանակ արտակարգ եւ լիազոր դեսպան Պատրիկ Սվենսոնին:

Ողջունելով դեսպանին՝ Նորին Սրբությունը բարեմաղթեց արդյունավոր առաքելություն:

Հանդիպմանը Հայոց Հայրապետը, անդրադառնալով հայ ժողովրդի առջեւ ծառացած արտաքին եւ ներքին մարտահրավերներին, իր երախտագիտությունը հայտնեց Շվեդիային, ինչպես նաեւ միջազգային դիվանագիտական առաքելություններին՝ պատերազմի ու հետպատերազմյա ծանր օրերին Հայաստանին եւ հայ ժողովրդին բերած աջակցության եւ զորակցության համար:

Վեհափառ Հայրապետը, ի դեմս դեսպանի, իր գնահատանքը բերեց Շվեդիայի իշխանություններին հայ համայնքի հանդեպ ցուցաբերվող հոգատար վերաբերմունքի, ազգային եւ հոգեւոր կյանքով ապրելու հնարավորություն ընձեռելու համար:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը նշեց նաեւ,

որ Մայր Աթոռ պատրաստակամ է տարբեր ոլորտներում գործակցել Շվեդիայի դեսպանության հետ:

Իր հերթին դեսպան Պատրիկ Սվենսոնը, շնորհակալություն հայտնելով Հայոց Հայրապետին ջերմ ընդունելության համար, հույս հայտնեց, որ հայ ժողովուրդը կկարողանա հաղթահարել պատերազմից հետո իր առջեւ ծառացած բոլոր դժվարությունները: Դեսպանն ընդգծեց նաեւ, որ մեծապես տպավորված է Հայաստանով եւ հայ ժողովրդի հյուրընկալությամբ: Պրն Պատրիկ Սվենսոնը հավաստիացրեց Նորին Սրբությանը, որ դեսպանությունը ջանքեր է գործադրելու հայ-շվեդական կապերը տարբեր բնագավառներում առավել խորացնելու ու զարգացնելու ուղղությամբ՝ իրականացնելով մի շարք ծրագրեր:

Զրույցի ընթացքում Հայոց Հովվապետը Շվեդիայի թագավորության դեսպանին ներկայացրեց Մայր Աթոռի դերակատարությունը հայ ժողովրդի կյանքում եւ ներկայումս



իրականացվող գործունեությունը՝ կարելու էլ քրիստոնեական արժեքների պահպանումն ու գործադրումը:

Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսը դեսպանին մաղթեց արդյունավետ գործունեություն՝ ի գործունեում հայ-շվեդական հարաբերություններին:

Նոր նշանակումներ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գաբեգին երկրորդ Ճայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական տնօրինությամբ կատարվել են եկեղեցականների նոր նշանակումներ:

Տաճատ վրդ. Շատուրյանը, ազատվելով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ստանձնած պարտականություններից, նշանակվել է հնդկահայոց հոգեւոր իովիվ եւ Կալկաթայի հայոց մարդասիրական ճեմարանի կառավարիչ:

Եսայի քհն. Արթեմյանը, ազատվելով Արարատյան հայրապետական թեմում ստանձնած հոգեւոր պարտականություններից, նշանակվել է Մայր Աթոռի տեղեկատվական համակարգի տնօրեն:

Արսեն քհն. Միրզոյանը, ավարտելով իր ուսումնառությունը Գերմանիայում, նշանակվել է Մայր Աթոռի «Քյուրքչյան» երեխաների աջակցության կենտրոնի հոգեւոր տեսուչ:

Երվանդ քհն. Երանյանը, ազատվելով Մայր Աթոռում ստանձնած պարտականություններից, ծառայության է կոչվել Ռուսաստանի եւ Նոր Նախիջևանի հայոց թեմում:

Ամենայն Հայոց Կաթողիկոսի այցը Մոսկվա



Նոյեմբերի 11-ին Ն. Ս. Օ. Ս. Տ. Գարեգին Երկրորդ Ճայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը երկօրյա այցով մեկնեց Մոսկվա՝ մասնակցելու տարածաշրջանի հոգեւոր առաջնորդների եռակողմ հանդիպմանը:

Նորին Սրբությանն ուղեկցում էին Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրեն Նաթան արք. Հովհաննիսյանը, Արցախի թեմի առաջնորդ Վրթանես եպս Աբրահամյանը, Մայր Աթոռի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի տնօրեն եւ Գեւորգյան հոգեւոր ճեմարանի տեսուչ Շահեն Ծ. վրդ. Անանյանը, Գերագույն հոգեւոր խորհրդի անդամ, ի. գ. դ. Գեւորգ Դանիելյանը եւ Մայր Աթոռի կաթողիկոսական գրասենյակի տնօրեն Վահրամ ավգ քհն. Մելիքյանը:

Հոկտեմբերի 12-ին Ն. Ս. Օ. Ս. Տ. Գարեգին Երկրորդ Ճայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը պատվիրակության ուղեկցությամբ Մոսկվայի Սուրբ Դանիելի պատրիարքանիստ վանքում հանդիպում ունեցավ Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Նորին Սրբություն Կիրիլ Ա Պատրիարքի հետ:

Ողջունելով Ամենայն Հայոց Կաթողիկոսին եւ նրա պատվիրակությանը՝ Ռուս Ուղղափառ Եկեղեցու պետն անդրադարձավ երկու եկեղեցիների բազմադարյա եղբայրական փոխհարաբերություններին, ինչպես նաեւ խոսեց երկու ժողովուրդների ու երկրների միջեւ ձեւավորված բարեկամական ու ջերմ կապերի մասին:

Իր հերթին Հայոց Հովվապետը հաստատեց, որ Հայաստանի ու Ռուսաստանի միջեւ առկա են դարավոր բարեկամության ամուր կապեր, որոնք անփոփոխ կերպով դրսևորվել են անգամ ամենադժվարին եւ բարդ իրավիճակներում:

«Մեր ժողովուրդների եւ եկեղեցիների բազմադարյա բարեկամությունն արտահայտվել է ինչպես ուրախության, այնպես էլ վշտի պահերին: Մենք ուրախացել ենք մեր համատեղ ձեռքբերումներով եւ միասին պայքարել մեր բարեկամության եւ եղբայրության անխախտ պահպանման համար: Եվ մեր հանդիպումները Ձերոջ Սրբությանն հետ դրա լավագույն վկայությունն են: Մենք միշտ զգացել ենք Ռուս Ուղղափառ Եկեղեցու պետի աջակցությունը», - ընդգծեց Գարեգին Երկրորդ Կաթողիկոսը:

Անդրադառնալով դարաբաղյան պատերազմին եւ հետպատերազմյան հետեւանքների հաղթահարման խնդիրներին՝ Վեհափառ Հայրապետն իր եղբայրական երախտագիտությունը հայտնեց Ռուս Եկեղեցուն եւ նրա Հովվապետին՝ ծանր այդ շրջանում Հայոց Եկեղեցուն եւ ժողովրդին ցուցաբերած գորակցության համար: Նորին Սրբությունը նաեւ հավելեց. «Այսօր, ինչպես հայտնի է Ձերոջ Սրբությանը, մեր ժողովրդի եւ մեր երկրի համար դժվար ժամանակներ են: Սակայն հավատում ենք, որ Աստուծո օգնությամբ եւ մեր հավատի շնորհիվ, ինչպես նաեւ բարեկամ երկրների, առաջին հերթին՝ Ռուսաստանի Դաշնության աջակցությամբ կկարողանանք հաղթահարել նաեւ այս փորձությունը»:

Զրույցի ընթացքում քննարկվեցին հակամարտության կարգավորման ուղղությամբ գործադրվող խաղաղարարա-

կան ջանքերը:

Հանդիպման ավարտին Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Պատրիարք Կիրիլ Ա-ն Ամենայն Հայոց Կաթողիկոսին շնորհեց Ռուս Ուղղափառ Եկեղեցու «Փառքի եւ պատվի» առաջին աստիճանի շքանշան՝ Հայ Առաքելական Եկեղեցու եւ Մոսկվայի Պատրիարքարանի միջեւ բարեկամական հարաբերությունների զարգացման գործում ներդրած ավանդի ու Նորին Սրբության ծննդյան 70-ամյակի առիթով:

Այս կապակցությամբ Վեհափառ Հայրապետն իր շնորհակալությունը հայտնեց Կիրիլ Պատրիարքին՝ ընդգծելով. «Այս պարզեղ դիտարկում ենք իբրեւ Ձերոջ Սրբության հարգանքի եւ սիրո նշան մեր ժողովրդի եւ եկեղեցու հանդեպ»:

Հույս հայտնելով, որ հետագայում եւս երկու եկեղեցիների միջեւ հարաբերությունները կպահպանվեն բարձր մակար-



դակի վրա, ինչպես նաեւ ընդգծելով քրիստոնեական ներկայության կարեւորությունը Կովկասում՝ Նորին Սրբություն Կիրիլ Պատրիարքը նշեց. «Ամենատեղ, թերեւս, ներկայություններից մեկն իրականացվում է Ձեր Եկեղեցու եւ Ձեր անձի միջոցով: Ամեն կերպ պետք է աջակցենք, որ Ձեր ծառայությունն այնքան բարեհաջող լինի, որքանով դա հնարավոր է Ռուս Ուղղափառ Եկեղեցու համար»:

Հոկտեմբերի 13-ին Ս. Դանիելի պատրիարքանիստ վանքում, միջնորդությամբ Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Կիրիլ Պատրիարքի, տեղի ունեցավ Ռուսաստանի, Հայաստանի եւ Ադրբեջանի հոգեւոր առաջնորդների հանդիպումը: 1988 թվականից սկսած սա դարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորմանն ի նպաստ 17-րդ հանդիպումն էր:

Հանդիպումը բացվեց Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Կիրիլ Պատրիարքի բացման խոսքով:

«Մենք հավաքվել ենք այսօր քննարկելու Լեռնային Ղարաբաղում բազմամյա հակամարտության հետեւանքների հաղթահարման խնդիրը, որում ներգրավված են Ադրբեջանի եւ Հայաստանի ժողովուրդները: Ընդհանուր առմամբ լեռնային շրջանում տարվա ընթացքում մենք հոգեւոր առաջնորդներս, ջանում ենք, որ մեղմենք այս ողբերգական հակամարտու-

թյունը: Աստուծոց կոչված ենք քարոզելու սեր եւ ողորմություն, անգամ երբ դա դժվար իրականացնալի է թվում»:

...Քաջ հայտնի է, որ հոգեւոր կյանքի ոլորտը մարդու համար ամենագալունն է: Ցավոք, կան մարդիկ, որոնք բռնությունը, դաժանությունն ու արյունահեղությունն արդարացնում են կրոնով: Եվ մենք կոչված ենք համատեղ միանշանակ պատասխան տալ կրոնը եւ պատերազմը միմյանց կապելու փորձերին» (տես <https://www.youtube.com/watch?v=iU0Y6wAAZl8>):

Ն. Ս. Օ. Ս. Տ. Գարեգին Երկրորդ Ճայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, իր խոսքն ուղղելով Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Կիրիլ Պատրիարքին եւ Կովկասի մահմեդականների վարչության առաջնության շեյխ-ուլ-իսլամ Ալլահշուքուր Փաշա Ջադեիին, մասնավորապես ասաց. «2017 թվականից ի վեր տեւական ժամա-



նակ հնարավորություն չենք ունեցել հանդիպելու հոգեւոր առաջնորդների այս ձեւաչափով, որտեղ ոչ միայն արծարծվում էին դարաբաղյան հակամարտությամբ պայմանավորված մեր ժողովուրդների կյանքում առաջ եկած խնդիրները, այլեւ ուղիներ էին որոնվում դրանց հաղթահարման, մթնոլորտի լիցքաթափման եւ կայունացման՝ համուն տարածաշրջանում խաղաղության եւ անվտանգության հաստատման: Այս առիթով Մեր երախտագիտությունն ենք հայտնում մեր սիրեցյալ եղբորը՝ Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Պատրիարք Կիրիլ Ա-ին այս հանդիպումը կազմակերպելու համար:

Մեր հանդիպումը տեղի է ունենում այնպիսի ժամանակահատվածում, երբ մեր տարածաշրջանը վերստին գերադրված է:

Ադրբեջանն անցած տարվա սեպտեմբերի 27-ին Թուրքիայի բացահայտ աջակցությամբ եւ միջազգային ահաբեկչական խմբավորումների ներգրավմամբ Արցախի ժողովրդի դեմ սանձազերծեց պատերազմական լայնածավալ գործողություններ, ինչը աղետալի իրավիճակ ստեղծեց ողջ տարածաշրջանում եւ ունեցավ ողբերգական հետեւանքներ մեր ժողովուրդների համար: Ծանր մարտերում Ադրբեջանի կողմից արգելված զինատեսակների՝ կասետային եւ ֆոսֆորային զենքերի կիրառման հետեւանքով զոհվեցին, վիրավորվեցին եւ հաշման-

դամ դարձան հազարավոր զինվորականներ, քաղաքացիական անձեր, այդ թվում՝ կանայք եւ երեխաներ, խոշտանգումների ենթարկվեցին խաղաղ բնակիչներ, տեղահանվեցին եւ անօթեւան դարձան շուրջ 40000 արցախցիներ: Հատուկ թիրախավորմամբ Արցախում հրթիռակոծվեցին բնակելի շենքեր, հիվանդանոցներ եւ ծննդատներ, եկեղեցիներ, մշակութային կենտրոններ ու պատմական հուշարձաններ:

Ադրբեջանի կողմից արյունալի եւ աղետաբեր ագրեսիան հնարավոր դարձավ կասեցնել միայն Ռուսաստանի Դաշնության մախազահ մեծարգո տիար Վլադիմիր Պուտինի անձնական հետեւողական ջանքերի շնորհիվ, որին եւս մեկ անգամ հայտնում ենք Հայոց Եկեղեցու եւ մեր ժողովրդի երախտագիտությունը, նաեւ՝ Ադրբեջանի հսկողության տակ անցած տարածքներում հայկական հոգեւոր ժառանգության պահ-

պանության խնդրում դրսևորած հատուկ ուշադրության համար: Ձերոջ Սրբություն, ցանկանում ենք խոր զգացվածությամբ շնորհակալություն հայտնել Ձեր ազնիվ միջնորդությունների եւ խաղաղասիրական ջանքերի համար, որ հանդես բերեցիք պատերազմական 44-օրյա գործողությունների ընթացքում եւ դրանց ողբերգական հետեւանքների հաղթահարման համատեքստում: Հափազանց կարեւոր է Ձեր ներդրումը Ադրբեջանի վերահսկողության տակ հայտնված տարածքում 4-րդ դարի հայկական պատմական Դադիվանքի հետագա գործունեության ապահովման հարցում:

2020 թ. նոյեմբերի 9-ին Ռուսաստանի, Հայաստանի եւ Ադրբեջանի ղեկավարների կողմ ընդունված հայտարարության արդյունքում, Լեռնային Ղարաբաղում ռուսական խաղաղապահ ուժերի տեղակայմամբ նախադրյալներ ստեղծվեցին Արցախի ժողովրդի անվտանգ կյանքի վերականգնման եւ Արցախի թեմի առաքելության ապահով իրականացման համար:

Տարածաշրջանում կայունության ու խաղաղության հաստատման, անվտանգ եւ ապահով կյանքի երաշխավորման առումով դարաբաղյան հիմնախնդրի խաղաղ կարգավորումն այլընտրանք չունի: Սակայն հակառակ խնդիրների վերջնական հանգուցալուծման ուղղությամբ հայկական կող-

Ամենայն Հայոց Կաթողիկոսի այցը Մոսկվա



մի պատրաստականության, ԵԱՀԿ Մինսկի խմբի համաձայնագրի տրամադրությունները խաղաղարարական ջանքերի՝ Ադրբեջանի իշխանությունների որդեգրած՝ արժանապատվությունը նսեմացնող եւ ռազմատենչ անընդունելի հռետորաբանության եւ ոչ կառուցողական ու վերջնագրային քաղաքականության պատճառով տարածաշրջանում իրավիճակը շարունակում է մտահոգիչ մնալ եւ լարված:

Հետեւաբար, ինչպէս կարող է դարաբայան հակամարտությունը կարգավորվել, – քանի դեռ Ադրբեջանը դարաբայան հիմնախնդրի հանգուցալուծման հարցում շարունակում է առաջնորդվել ուժի կիրառման սկզբունքով եւ ծավալապաշտական ձգտումներով:

– քանի դեռ հստակեցված չէ Լեռնային Ղարաբաղի կարգավիճակը, եւ երաշխավորված չէ արցախահայության անկախ կյանքի իրավունքի իրացումը: Պետական մակարդակով հայաստանի պարզապես չկան կոչված Ռազմավարի պոլսակը Բաքվում վկայությունն են այն իրողության, որ Լեռնային Ղարաբաղի ժողովուրդը երբեք չի կարող անվտանգ ապրել եւ գոյատևել Ադրբեջանի կազմում,

– քանի դեռ ազատ չեն արձակվել բոլոր ռազմագերիները՝ անկախ Ադրբեջանի կողմից նրանց վերագործվող կարգավիճակից, որոնց իրական թիվը չի բացահայտվում: Մեր ունեցած տեղեկություններով՝ անազատության մեջ գտնվող հայ գերիները հաճախ ենթարկվում են նվաստացման եւ խոշտանգումների, որոշ դեպքերում նաեւ տանջամահ արվում,

– քանի դեռ հայտնի չէ բռնի անհետացումների զոհ դարձած բազմաթիվ անձանց ճակատագիրը,

– քանի դեռ Ադրբեջանը չի դադարեցրել իր ոտնձգությունները ՀՀ պետական սահմանի նկատմամբ եւ հետ չի քաշվում գրավյալ տարածքներից,

– քանի դեռ միջազգային օրենսդրության հարգմամբ պատշաճ վերաբերմունք չի դրսևորվում համաշխարհային նշանակություն ունեցող հայկական պատմամշակութային ժառանգության նկատմամբ, քանի դեռ ավերվում եւ այծծվում են մեր աղոթատները, եւ չեն դադարում պատմությունը կեղծելու, հայկական վանքերն ու եկեղեցիներն իրենց ինքնությունից զրկելու փորձերը, չի ճանաչվում դրանց իրավական պատկանելությունը Հայոց եկեղեցու Արցախի թեմին, եւ Մեր զավակները զրկված են իրենց սրբավայրերն այցելելու իրավունքից:

Հայ ժողովուրդը բոլոր ժամանակներում արժեւորել է խաղաղությունը եւ ձգտել խաղաղ համակեցության հարեւան ժողովուրդների հետ, մշտապես հարգել այլոց կրոնական ազատությունները եւ մշակութային ինքնությունը: Մեր ժողովրդի խաղաղասիրական ձգտումները կառուցված են այն համոզման վրա, որ պատերազմներում չկան հաղթողներ, պարտվում են բոլորը, քանի որ չի կարող լինել հաղթանակ այնտեղ, ուր տիրապետում է մարդկային ողբերգությունը: Քրիստոնյաներիս Սուրբ Գիրքը, որի նվիրականությունը չի ժխտվում նաեւ իսլամի հավատավորների կողմից, «երկրում խաղաղության եւ մարդկանց մեջ համերաշխության» (հմմտ. Ղուկ. 2: 14) տեսիլքով է ոգեշնչում մարդկությանը:

Տարբերությունների մեջ համդուրժողականության, խաղաղ համակեցության ու բարիք ստեղծելու պատգամն է փոխանցում մարդկանց նաեւ իսլամի Սուրբ Գիրքը՝ Ղուրանը, երբ արձանագրում է. «Ձեզանից յուրաքանչյուրին որոշակի օրենքներ եւ ապրելակերպի ծրագիր սահմանեցինք:

Եթե Աստված կամենար, Նա կարող էր ձեզ բոլորիդ մեկ հասարակության վերածել, սակայն (այդպես չկամեցավ), որպեսզի ձեզ տվածի համեմատ փորձի ձեզ: Մրցակցեք ուրեմն բարի գործերով» (Սուրաթ «Ալ-Մա-իդա» 5:48):

Հենց այս ոգով այսօր՝ 21-րդ դարի փոխադրված իրականության մեջ բոլոր խնդիրները ազգերի միջեւ պիտի կարգավորվեն միայն խաղաղ ուղիներով, արդարությամբ, օրինականության եւ իրավունքի հարգումով:

Պատերազմը չէ ճանապարհը խնդիրների լուծման, եւ այս պատերազմն էլ իրականում ոչ թե լուծումներ, այլ մոր ողբերգություններ ծնեց եւ մոր խնդիրներ հարուցեց: Ռազմական ճանապարհով, զենքի նշանառության մերքո հնարավոր չէ խաղաղություն կերտել, ռազմագերիների գործոնի շահարկմամբ անհնար է համերաշխության եւ գործակցության հասնել, իսկ պետական մակարդակով հայաստանից սերմանմամբ եւ սպառնալիքներով բացել հաղորդակցման ուղիները:



Հակառակ առկա ծանր կացության՝ Մենք շարունակում ենք հուսալ, որ պիտի կարողանանք հաղթահարել ծառացած մարտահրավերները, նաեւ զորակցությամբ խաղաղասեր մեր բարեկամ երկրների եւ մտահոգ միջազգային համրության ու կառույցների: Նաեւ հույս ունենք, որ այս դժվարին իրադրության մեջ Ադրբեջանի իշխանությունները հետ կկանգնեն իրենց ծավալապաշտական նկրտումներից, որոնք կարող են տարածաշրջանը կանգնեցնել մոր՝ առավել

լայնամասշտաբ պատերազմի առջեւ: Հոգեւոր առաջնորդներիս աղոթքներն ու ջանքերն այսօր պիտի հետապնդեն համերաշխության ու փոխըմբռնման մթնոլորտ ձեւավորելու նպատակ, որպեսզի թոթափվի լարվածությունը, եւ Բարձրյալն օրհնի մեր կյանքը իր խաղաղությամբ, ողորմությամբ եւ առատ շնորհներով:

Վերստին Մեր շնորհակալությունն ենք հայտնում Ձեզ, սիրեցյալ եղբայր ի Քրիստոս՝ Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Պատրիարք, հանուն խաղաղության Ձեր մերդրած ջանքերի եւ այս հանդիպման համար:

Հարգարժան շեյխ-ուլ-իսլամ, հավատում ենք, որ մեր այս հանդիպումը պիտի արդյունքներ ապահովի Ձեր անմիջական միջնորդությամբ Ադրբեջանի իշխանությունների մոտ՝ մասնավորապես հումանիտար հարցերի, առկա հոգեւոր-կրոնական խնդիրների կարգավորման եւ մեր ժողովուրդների կյանքում խաղաղության վերահաստատման գործում:

Աղոթում ենք աշխարհում խաղաղության եւ մեր տարածաշրջանում կյանքի ապա-

հով ու անվտանգ, բնականոն ընթացքի վերականգնման ու առաջընթացի համար: Թող Տերն օրհնի խաղաղության բոլոր ճանապարհները եւ իր իմաստությամբ առաջնորդի մեր ժողովուրդներին»:

Տեղի ունեցած քննարկումների ավարտին հանդիպման արդյունքների վերաբերյալ Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Կրիլ Պատրիարքը հանդես եկավ հայտարարությամբ (տե՛ս <http://www.patriarchia.ru/db/text/5852405.html>):

Մարկավագական ձեռնադրությունն Երեւանի Ս. Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցում

Նոկտեմբերի 10-ին Երեւանի Ս. Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցում, Ն. Ս. Օ. Տ. Տ. Փարեգին երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի լուսարարապետ Մուշեղ եպս Բաբայանի ձեռնամբ սարկավագական ձեռնադրության արժանացավ Գեւորգյան հոգեւոր ճեմարանի 2 լսարանի 25 սան:

Նախօրեին՝ հոկտեմբերի 9-ի երեկոյան, Մայր Աթոռի Սրբոց Հրեշտակապետաց եկեղեցում Գեւորգյան հոգեւոր ճեմարանի Ե լսարանի 16 եւ 2 լսարանի 25 սան, ձեռնամբ Մայր Աթոռի միաբան Արարատ եպս Գալթազյանի, ստացավ կիսասարկավագության աստիճան:

Սուրբ Պատարագի ընթացքում՝ ձեռնադրության սուրբ խորհրդի ավարտին, սրբազան հայրը, խոսելով սարկավագության խորհրդի մասին, մշեց, որ Վազգենյան հոգեւոր դպրանոցում եւ Գեւորգյան հոգեւոր ճեմարանում կրթություն ստացած 25 երիտասարդ սարկավագները պատրաստակամորեն համձն առան իրենց կյանքը զոհաբերելու եկեղեցու սպասավորությանը



եւ հավատացյալների հոգեւոր կարիքները հոգալու համար: Այնուհետեւ Մուշեղ եպիսկոպոսը, դիմելով

սարկավագներին, ասաց. «Առաջին սարկավագը՝ սուրբ Ստեփանոսը, կյանքով վճարեց իր կոչումին հավատարիմ մնալու համար:

Քրիստոնեական եկեղեցին իր դարավոր պատմության մեջ ունեցել է նահատակության բազմաթիվ դեպքեր: Ամենաթաքնը, որ ունենք մեր իրականության մեջ՝ իբրեւ վկայություն մեծագույն զոհաբերության, դա մեր երկու սարկավագների նահատակությունն է հայրենի հողի պաշտպանության համար: Իրենց օրհնակն առավել քան խոսում է. կոչված եք կարելու առաքելության, եւ ինչպես ձեր երկու լուսահոգի հոգեւոր եղբայրների կյանքի ընթացքը ցույց տվեց, իրապես, սարկավագությունը եւս զոհաբերություն է՝ անգամ պատրաստ լինել կյանքը տալ հայրենիքի ու հավատի համար...»:

Վերջում Մայր Աթոռի լուսարարապետը կոչ արեց հավատացյալներին մշտապես աղոթել ձեռնադրված սարկավագների կյանքի ընթացքի համար, որ Աստուծոց իրենց տրված շնորհները չպակասեն, եւ իրենց համձնառած սրբազան առաքելությունն ու զոհաբերությունը ընդունելի լինեն Տիրոջ կողմից:

Լրատվական նյութերը՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տեղեկատվական համակարգի

Վաթսուռականների արձակագիրներ. Ժամանակը եւ հերոսը

Սկիզբը՝ թիվ 12–18

Բակունցի ակնարկը շատ խոր ու դիտողական է։ Դեպքերի վայրը՝ Ահմաձոր, որ Սյունյաց աշխարհի տեղավայր է, իսկ Մաթևոսյանին իր Ահմաձորն է։

Ահմաձորի կածանով մի ծերունի գնում է։ Կինը մոր է մահացել, որդին պաշտոնյա է Տաշքենդում։ «Ինչի՞նչ ես գնում»,– հարցին պատասխանում է. «...Էսօր էգուց որ մեռնեմ, բա իմ մյուսքիս, կալ ու մարագիս մի քան տիրանալու։ <...> Գա, երեսի ջրով եղածն իրան տամ, ինձ էլ պարտակի հողում, հետո գերեզմանիս ուշուց չտա»։ Մուրացանի «Նոյի ագռավ»-ի հանգով մարդը մահ տրտմունք է որդուն ուսման տալու համար, որովհետև կողքին չէ։ Չետո այս գյուղացին պետք է երեսար բարձած ֆուրգոնի մեջ՝ օտարության գնացող մի տասը կին ու երեխայի հետ։

Քանգվում է հայրը աշխարհը։ Աղքատությունը ժողովրդին տակնուվրա է անում։

Ակնարկում կա այսպիսի մի տեսարան. աղվեսի ձագին ուղեկից անտառապահը չի կարողանում բռնել։ Վերելից անգղը ընկնում է նրա վրա, ճանկում, վերել բարձրացնում է քիչ հետո նետում ներքե։ Անտառապահը վերստին ընկնում է արդեն մոլոր վագող աղվեսի ձագի հետելից, բռնում է... անգղը հանել էր նրա աչքերը, ակնաբերից արյուն էր հոսում։ Պարզ է, չի ապրի եւ գայլի բաժին պիտի դառնա։

Աղվեսի ձագի հետ կատարված ֆուրգոնով օտարություն գնացող ծեր, կին, երեխայի հետեմկարն է։ Կույր-կույր գնում են, որ կործանվեն, դառնան գայլերի բաժին՝ ձուլվեն, վերանան, դառնան ուրիշ, օտար...


Այս մտայնության մի նոր արտահայտություն է, ահա, Մաթևոսյանի «Տաշքենդ»-ը։ Աչքի առջև են Ջանդառ Թեանը, Սիրուն Թեանը, ահմիձորյան միջավայրն ու մարդիկ։

Մաթևոսյանը մշտապես իր նյութի շրջանակներում է։ Իսկ նրա բանարկվեստը, ոճը արժանի են առանձին ու մանրակրկիտ ուսումնասիրության։ Նա ոչ թե պատմում է, այլ ներկայացնում եղելությունը գործողությունների մեջ, ոչ թե սովորական ձեռով շարադրում է դեպքերի ընթացքը, այլ կենդանագրում՝ մանրամասներով ստեղծում ամբողջի տեսանելի պատկերը։ Նրա ոճի ինքնատիպությունը պայմանավորված է կյանքը հնարավորին չափ տեսանելի, շոշափելի ձեռով պատկերելու կարողությամբ։ Նա բնականորեն վերարտադրում է հոգեվիճակն ու զգացողությունը, բնագոյների շարժումն ու սովորական բնապատկերը։ Նրա ցուցադրած կյանքը երեւում է ամբողջությամբ ու լրիվ՝ իր լացով ու տխրությամբ, տառապանքով ու խեղճությամբ, կոտրված ծիծաղով ու պահից ծնվող երգիծանքով, վիճակի հասունացման բնականոն ընթացքով ու զգացմունքների խլիրտով. մի խոսքով՝ լայնքով ու խորքով։ Նրա գրելու արվեստի առանձնահատկություններից մեկը տվյալ պատկերի ու պահի հատկանշական բաղադրամասերը մտքի միաժամանակյա հոսքով բնական հաջորդականությամբ ներկայացնելու մեջ է։ Դա է պատճառը, որ նրա նախադասությունները շատ են հագեցված, շատ են ընդգրկում ու լիքը եւ ներքուստ մտքի, զգայությունների տարբեր փոխադրմանավորվածությամբ կապակցված։ Այդպիսին են մահ նրա վիպակների ու պատմվածքների կառուցվածքը, խոսքի ամբողջ հյուսվածքը։ Այդ ամենն ստեղծում է կենսական շնչով հագեցված նախադասությունների ու պարբերությունների մի պոետա-հողմային ու առաջընթաց շարժում, որ դժվարին ու տքնաջան աշխատանքի արգասիք է։ Յուրացնելով 19-րդ դարի ռուս դասական եւ 20-րդ դարի համաշխարհային արձակի փորձը՝ Մաթևոսյանն ստեղծում է գեղարվեստական մտածողության միանգամայն մոր ու ժամանակակից համա-

կարգ, ինչը եւ ապահովում է նրա գրական հաջողությունը եւ նյութին տալիս արդիական որակ ու հնչեղություն։ Գեղարվեստական մտածողության մասն են կազմում մահու գեղարվեստական արտահայտչամիջոցները, բառակազմը, ընդհանուր առմամբ՝ լեզվի ու ոճի տարրերը, որոնք եւս բարձր վարպետությամբ է օգտագործում հեղինակը՝ հասնելով խոսքի պատկերավորման հյուսեղության ու գունագեղության։ Մաթևոսյանի խոսքի շարահյուսվածքն ասես լի ու վարար մի գետ լինի, որ ծանր ու մեծ հոսում է հարթավայրով։

Գեղարվեստական մտածողության այս սկզբունքներն ստեղծում են գրական հերոսի նկարագրի բացահայտման մի առանձնահատուկ ձև, որ մոր կողմերից է ներկայացնում նրանց կյանքն ու ներաշխարհը։

Մաթևոսյանն ստեղծում է հերոսների մի պատկերաշար, որոնք իրար շարունակելով ու լրացնելով՝ գրականություն են բերում կենսապրումի եւ կենսաճանաչողության մոր կողմեր։ Մեր օրերում շրջանառության մեջ մտած, այսպես կոչված, «բանասիրական» գրականությունը, որն անկյանք ու շինծու, արտաքուստ գրագետ տեսք ունեցող հորինվածքներից այն կողմ չի անցնում, Մաթևոսյանը հակադրում է կենսական լիցքերով հարուստ, հյուսեղ, վարար ու հորդուն մի արվեստ, որն ի հայտ է բերում կյանքի ճանաչողության միանգամայն մոր հայեցակարգ։



Վարդգես Պետրոսյանը գրականություն է բերում առավել չափով կյանքի մոր, թարմ վիճակներում գործող, այդ վիճակների մեջ իրենց էությունը դրսևորող հերոսների։ Կյանքի ժամանակակից վիճակների մեջ իր հերոսներին հայտնաբերելու, այդ վիճակների նկարագրությամբ ու վերլուծությամբ ներկա կյանքն ու պատկերը որսալու միտումը նրա համար սկզբունքային նշանակություն ունեցող ստեղծագործական նախադրյալ է։ Դա ակնհայտորեն նկատելի է թե՛ նրա պատմվածքներում ու նորավեպերում, թե՛ «Մամա, ես արդեն մեծացել եմ», «Ապրած եւ չապրած տարիներ», «Դեղատուն «Անի» վիպակներում եւ թե՛ «Հայկական էսքիզներ» խոհագրության մեջ։

Նոր հերոսները գործում են քաղաքային կյանքի սովորական իրադրությունների մեջ, բայց այնպիսի իրադրությունների, որոնք միանգամայն մոր ոլորտների մեջ են ներթափանցում իրականության գեղարվեստական վերարտադրությունը։ Նրա հերոսները կարող են իրար հանդիպել բնցքամարտի ժամանակ, հեռու մի օդանավա-

Հ. Թումանյանի հասարակական գործունեության վերջին շրջափուլը եւ Հայաստանի օգնության կոմիտեն (ՀՕԿ) 1921—1923 թթ.

Նա մեծ էր հողով, արյունով։ Արմատներ ուներ նա հողում...

Եղիշե Զարենց

Հ. Թումանյանի կյանքի ու հատկապես հասարակական գործունեության վերջին շրջափուլը (1921–1923 թթ.) համեմատաբար քիչ է ուսումնասիրված։ Այս հոդվածի շրջանակներում փորձել ենք լուսաբանել, ներկայացնել ու գնահատել հայ մեծ բանաստեղծ Հ. Թումանյանի հասարակական գործունեության վերջին տարիները (1921–1923 թթ.), որոնք կապված էին Հայաստանի օգնության կոմիտեի (ՀՕԿ) ստեղծման ու կայացման ժամանակաշրջանի հետ։

Հայ ժողովրդի բնավորության յուրահատուկ, լավագույն հատկանիշներն իր ներսում բյուրեղացրած, հարազատ ժողովրդի էությունը, ներաշխարհը, աշխարհայացքը, աշխարհագրությունը լավագույն ճանաչած ու իր գրական հերոսների կերպարներով ներկայացրած ամենահայ համաճար Հովհաննես Թումանյանը սիրված ու հարգված, անառարկելի հեղինակություն ու հանճարեղ էր ամենուրեք՝ բոլոր բնագավառներում։ Հ. Թումանյանը հայոց պարծանքն է, աշխարհասփյուռ հայության մկրիյալ գավակը, որն իր ազգին անմնացորդ ծառայեց հողով ու սրտով, բանիվ եւ գործով, ամբողջ էությամբ։

Ամենայն հայոց բանաստեղծ Հ. Թումանյանը հասարակական-քաղաքական գործունեությամբ զբաղվելու առաջին քայլերը կատարել է դեռևս 1880-ական թվականների վերջերին։ Դա հայ ժողովրդի գաղափարական զարթոնքի, ոգեւորության, քաղաքականապես հասունացման ու ազգային-ազատագրական շարժման եւ պայքարի ծավալման, անօրինակ վերելքի ժամանակաշրջան էր, երբ հայ ժողովրդի ազգային ինքնագիտակցության դրսևորումները եւ ազատագրական պայքարի պոռթկումները առավել կազմակերպված ու գործնական բնույթ էին կրում։ Այդ ժամանակ Արեւմտյան Հայաստանում ձեւավորվում էր ֆիդայական շարժումը, որի նպատակը արեւմտահայությանը կեղեքումներից, նվաստացումներից, ազգային ու կրոնական հալածանքներից պաշտպանելն էր, արեւմտահայության ազատագրումն ու ինքնիշխան ազգային պետության ստեղծումն էր։ Այս մտայնությամբ ստեղծվում են քաղաքական գաղտնի խմբակներ ու կազմակերպություններ (ազատագրական խմբակներ, իսկ հետագայում՝ կուսակցություններ)։ Դրանցից էր 1889 թ. ստեղծված «Երիտասարդ Հայաստան» խմբակը, որին հետագայում



անդամակցում է մահ Թումանյանը։ Ազատագրական շարժման գաղափարներով ոգեշնչված ու ազգային-հայրենասիրական պոռթկումներին հագուրդ տվող երիտասարդ Թումանյանի առաջին ոտանավորներում նշմարվում է ոչ միայն հեղինակի ազգային-հայրենասիրական ոգին, այլև հայրուկային որոշ տրամադրություններ, որոնց շուտով բանաստեղծն աշխատում է տալ գործնական բնույթ։ Ընկերոջ՝ Անուշավան Աբովյանի վկայությամբ՝ դեռևս 1886–1887 թթ. բանաստեղծը հաճախում էր գաղտնի ժողովների։ Կնոջ՝ Օլգա Թումանյանի հավաստմամբ՝ ամուսինը կապված էր հայ ազատագրական շարժման առաջին գործիչներից մեկի՝ Ա. Գյուլշանի հետ։

Հայ ազգային-ազատագրական շարժման գործիչ Ալեքսանդր Գրիգորի Գյուլշանը (Վարդան Գյուլշան) ծնվել է 1867 թ. Թիֆլիսում։ 1877–1879 թթ. սովորել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում, 1882–1883 թթ.՝ Մոսկվայի Լազարյան ճեմարանում։ Մոսկվայում ուսանելու տարիներին հարել է «Հայրենասերների միություն» գաղտնի կազմակերպությանը։ Նամակներից մեկում Ա. Գյուլշանը խոստովանում է, որ, տար-

վելով Ռաֆֆիով, նպատակադրվել է իր կյանքը նվիրել Հայաստանի ազատագրության գործին։ 1883 թվականից ազատագրական, հեղափոխական գործունեություն է ծավալել Արեւմտյան Հայաստանում (Վան, Սասուն, Մուշ)։ Ապա անցել է Սալմաստ (Իրան), հաստատվել Հավթվան գյուղում, որտեղ ուսուցչությամբ է զբաղվել՝ միաժամանակ իրականացնելով ազատագրական, հեղափոխական գործունեություն։ Գյուլշանը գտնում էր, որ հայերը պետք է զենքի դիմեն եւ ազատագրվեն թուրքական լծից։ 1887 թ. Թիֆլիսում մասնակցել է ազատագրական խմբակների աշխատանքներին։ Հակոբ Սարկավազի հայրուկային խմբին միանալու մտադրությամբ 1889 թ. մայիսին իր համադասիներին՝ Հ. Ազիր-պայանի եւ Կ. Գուլակսզյանի հետ ճանապարհվել է Վան։ Մայիսի 24-ին Չուխ Գեդուկի (Չուխ Կետիկ, Չուխ Գյադուկ) լեռնանցքում՝ Սպիտակ աղբյուրի մոտ, կռվի են բռնվել թուրքական ոստիկանների եւ զինված քրդերի հետ, որի ժամանակ Գյուլշանն ու Ազիրպայանը զոհվել են, իսկ Գուլակսզյանին հաջողվել է փրկվել։ Հ. Թումանյանը Ա. Գյուլշանին է նվիրել «Հին կռիվը», «Տանը» եւ «Երկրում» բանաստեղծությունները, դրանք մի պոեմ են կազմում, որի գլխավոր հերոսը Ա. Գյուլշանն է։

Երիտասարդ Թումանյանը, տոջորված արեւմտահայերի ազատագրության գաղափարներով, ցանկացել է ընկերանալ Ա. Գյուլշանին, անցնել Տաճկահայաստան՝ հայրենիքն ազատելու։ Թումանյանը մույնիսկ ասործանակ էր գնել՝ Գյուլշանի հետ Արեւմտյան Հայաստան մեկնելու համար, բայց հիվանդանալով՝ հետ էր մնացել։ Իր հետագա ամբողջ գիտակցական կյանքում Հ. Թումանյանը շարունակեց զբաղվել հասարակական-քաղաքական ակտիվ գործունեությամբ եւ անձնվեր ու անմնացորդ ծառայեց հայրենիքին ու հայությանը։ Հասարակական գործիչ թումանյանական ունակություններն առավել ամբողջական ու բազմակողմանիորեն դրսևորվեցին Առաջին աշխարհամարտի եղբարական ու դրան հաջորդող դժմուհի տարիներին։ Ամենայն հայոց բանաստեղծն ուժերի գերազույն լարումով ու փութանակի փորձում էր օգնել եղեռնագարկ հայ գողթականների ու որբերին, համագնակություն էր կազմակերպում՝ հոգուտ սովի ճիրաններում

հայտնված ազգակիցների։ Նա, սթափ եւ ճիշտ գնահատելով ստեղծված իրավիճակը, կողմնորոշել է Ազգային բյուրոյի աշխատանքները, արդյունավետորեն կազմակերպել հայրենագուրկ արեւմտահայության խլյակների փրկության ու ողբերգական վիճակի վերացման գործը։ Ազգային բյուրոն (Թիֆլիսի ազգային կենտրոնական բյուրո) ստեղծվել էր Ռուսական կայսրության հալաշատ վայրերի ներկայացուցիչների համագումար-խորհրդակցությունում 1912 թ. հոկտեմբեր-նոյեմբերին։ Մասնակցել են Թիֆլիսի, Երեւանի, Բաքվի, Ախալցխայի, Նոր Նախիջևանի, Արմավիրի, Բաթումի եւ հայաշատ այլ վայրերի պատգամավորներ։ Համագումարի նպատակն էր՝ օգտվել 1912–1913 թթ. Բալկանյան պատերազմների հետեւանքով ստեղծված բարենպաստ իրադրությունից եւ հասնել Հայկական հարցի լուծմանը։ Ընտրվել է 7 հոգուց կազմված ժամանակավոր բյուրո (Ա. Հարությունյան, Ա. Խատիսյան, Ա. Քալանթար, Հ. Առաքելյան, Ա. Պողոսյան, Հ. Թումանյան, Ն. Աղբալյան), որը վարելու էր ընթացիկ գործերը։ Առաջին աշխարհամարտի տարիներին Ազգային բյուրոն կազմակերպել է հայկական կամավորական զորագնդեր, զբաղվել արեւմտահայ գաղթականներին տեղավորելու եւ նրանց պարենով ապահովելու հարցերով։ 1917 թ. հոկտեմբերից, Հայ ազգային խորհրդի ստեղծումից հետո, Ազգային բյուրոն դադարել է գործելուց։

Թումանյանը շրջահայաց գործիչ էր, մա յուրահատուկ կանխազգացությամբ, իրատեսորեն ու խորաթափանցորեն է պատկերացրել պատմական ժամանակաշրջանը եւ նրբանկատորեն, մեծ զգուշությամբ է վերաբերվել ազգային խնդիրներին։ 1916 թ. աշնանը Թումանյանը ձեռնամուխ է լինում «Հայկական ընկերության» ստեղծման նախապատրաստական աշխատանքներին։ 1917 թ. ապրիլի 22-ին «Հորիզոն» թերթում Հ. Թումանյանը «Հայկազյան ընկերության» նպատակների մասին գրում է. «Ընկերություն, որը կոչվելու է Հայկազյան, իբրեւ մոտավոր նպատակ՝ միտք ունի կազմել «Հայոց ակադեմիա», դնել հայկական համալսարանի հիմքը, զարգացնել հայագիտությունը եւ ամենակողմանի ուսումնասիրել մեր աշխարհը, մեր հին ու մոր կյանքը, մեր գրականությունն ու գեղարվեստը, նրա պատմությունն ու արդի կյանքը եւ ապահով վիճակի մեջ դնել գիտնականներին, գրողներին ու գեղարվեստագետներին։ Միաժամանակ Հայկազյան ընկերությունը հետեւելու է մեր կուլտուրական հիմնարկությունների գոր-

«Ակունքի» ակունքներում

1978-ի ողջ ձմեռն ինձ համար անցավ երկարատև գործուղումներում։ Մի քանի ամիս Ռուսաստանի ասիական մասի ամենաանհետաքրքիր քաղաքներում անցկացնելուց հետո Չայաստանին ու հայկական ամեն ինչին կարոտած տուն էի հասել, երբ մայրս պատմեց, որ հայկական երգերի մի նոր խումբ է ստեղծվել, որոնք երգում են Չայաստանի տարբեր շրջանների հնագույն երգեր։ «Ինձ թվում է՝ հենց դրանք են իսկական հայկական երգերը»,– վերջում ամփոփեց նա։

Զարմանալիորեն մի քանի օր անց հեռուստատեսությամբ կրկնեցին նորաստեղծ համույթի առաջին հեռուստահամերգը, որի մասնակիցները տարբեր մասնագիտությունների տեր մտավորականներ էին։ Խմբի ղեկավարը Գիտությունների ակադեմիայի լեզվի ինստիտուտի գիտաշխատող Մարո Մուրադյանն էր՝ անվանի ժողովրդական երգասաց Չայրիկ Մուրադյանի դուստրը։

Չեռուստահամերգի ընթացքում հայերենի տարբեր բարբառներով երգեր լսելով՝ անբացատրելի զգացումով համակվեցի։ Այդ ժամանակ ես չգիտեի, որ իմ ամենասիրելի տատիկը արմատներով վանեցի է, բայց լսելով Վանի բարբառով հնչող «Լայոխանն» ու «Ավանցին», անչափ տպավորվեցի այդ երգերի զարմանալի մեղեդայնությամբ, անգամ թվում էր՝ շատ վաղուց ինչ-որ տեղ լսել էի...

...Եվ գարնանային մի օր, ավելի ճիշտ՝ 1978 թվականի մայիսի 12-ին զնացի Լեզվի ինստիտուտ։ Մարո Մուրադյանին, իհարկե, չհաջողվեց հանդիպել, բայց խմբի երգչուհիներից մեկը՝ երիտասարդ բարբառագետ Ջենմա Բառնասյանը, ոչ միայն տեղեկացրեց փորձերի օրերի ու ժամերի մասին, այլև ծանոթացրեց բարբառագիտության բաժնի վարիչի՝ բանասիրական գիտությունների դոկտոր Յովհաննես Մուրադյանի հետ, որից էլ ստացա իմ մայրենի բարբառի վերաբերյալ ինստիտուտի համար նյութեր հավաքելու առաջին հանձնարարությունը։ Այս հանդիպումը ծակատագրական եղավ իմ կյանքում։ Ճակատագրական՝ ոչ միայն «Ակունքում», Մուրադյանների հարկի տակ մեր ազգային անարար տերգարվեստին մոտիկից հաղորդակցվելու, այլև իմ մասնագիտական կողմնորոշումը վերանայելու առումով։

Մարոն

Նույն օրը երեկոյան հանդիպեցի Մարո Մուրադյանին։ Շրջապատված ակունքցիներով՝ Մարոն նստած էր ինստիտուտի մոտակա մայթեզրի սոսիների տակ դրված նստարանին։ Չիշում եմ Մարոյի առաջին հարցը. «Որտեղի՞ց եմ արմատներդ»։ Իմանալով, որ ծնունդով Նախիջևանից եմ, նախ խնդրեց զուսամներով եւ երգասացներով հայտնի երբեմնի Գողթն գավառում ապրող արդեն սակավաթիվ հայերից երգեր ձայնագրել, ապա միանգամից պայծառացած ասաց, որ շատ նման եմ իր որդուն՝ Լեւոնին։

Չետագայում իմացա, որ Մարոյի երաժշտական արտակարգ ընդունակությունները գալիս են ոչ միայն հոր՝ Շատախի Ջնուկ գյուղում ծնված Չայրիկ Մուրադյանից, այլև մոր՝ Նախիջևանի Յարմջա գյուղում ծնված Աննա Խաչատրյանից՝ ակունքցիներիս շատ սիրելի Անիկ մայրիկից։ Մարոն պատմում էր, որ մայրիկը երիտասարդ տարիներին շատ գեղեցիկ ծայն է ունեցել եւ օժտված լինելով նաեւ երաժշտական բարձր ճաշակով՝ ոգետրել ու խորհուրդներ է տվել Չայրիկին առաջին հրապարակային ելույթներին պատրաստվելիս։ Անիկ մայրիկը, ցավոք, դադարել է երգել իր մանկահասակ միակ որդու մահից հետո...

Մարո Մուրադյանն ու «Ակունքը» մի ամբողջ համալսարանի հետք թողեցին իմ կյանքում։ Պոլիտեխնիկական ավարտած երիտասարդ ճարտարագետիս մեջ բանասերի ակնհայտ հատկանիշներ նկատելով՝ Մարոն ինձ նաեւ համույթի տարեգիր եւ դպրապետ նշանակեց։ Ես էլ չիմացա, թե ինչպես սկսեցի բանահավաքությամբ հրապուրվել, ավելի ոգետրված հաճախել ազգային գրադարանի հունանիտար ընթերցասրահ եւ ինքնակրթությունս շարունակելով՝ գրեցի



գիտական իմ առաջին հոդվածները, գրական ստեղծագործություններն ու հրապարակագրությունները։ Անմոռաց այդ օրերին հայ բարբառագիտության վերաբերյալ գիտական առաջին հոդվածս մեքենագրել եմ Մարոյեց տանը՝ Չայրիկի անձնական գրամեքենայով, Մարոյի անգնահատելի խորհուրդներով։ Իսկ թեկնածուական ատենախոսությունս, զարմանալի զուգահիշյությամբ, մախապաշտպանել եմ հենց Մարոյի 70-ամյակի օրը՝ 2003 թվականի նոյեմբերի 10-ին (երբ, ցավոք, Մարոն վաղուց արդեն մեզ հետ չէր), Լեզվի ինստիտուտի այն բաժնում, ուր տարիներ շարունակ աշխատել էր նա։ Եվ երբ

մենագրության տեսքով լույս տեսավ իմ աշխատանքը, բնականաբար այն մվիրեցի անմոռանալի ուսուցչիս հիշատակին։

Մարո Մուրադյանը «Ակունքի» եւ նրա համակիրների, մեր տոհմիկ մշակույթի համար բացառիկ մի երեսույթ էր՝ հայրենի երգարվեստի առանձնահատկություններն այնքան նրբորեն զգացող եւ նույնքան մախանձախնդրությամբ, խնամքով ու ճաշակով ներկայացնող օժտված մի անհատականություն։ Այդպիսին էլ նա առիավետ մնաց ակունքցիներիս, իրեն ճանաչող մեր հայրենակիցների հիշողության մեջ, որի վկան եմ այսօր էլ նվիրական առաքելությունն ու ավանդույթները շարունակող «Ակունք» համույթը, նրա օրինակով հայրենի երգն ու պարը պահպանող ու տարածող բազմաթիվ ազգագրական խմբերը։

Առաջին փորձը

Չամույթի փորձասենյակը Լեզվի ինստիտուտի երկրորդ հարկում էր։ Ոչ մեծ այդ սենյակի մի անկյունում դաշնամուրն էր դրված, օղակածեւ

Հ. Թումանյանի հասարակական գործունեության վերջին շրջափուլը եւ Հայաստանի օգնության կոմիտեն (ՀՕԿ) 1921—1923 թթ.

ծունեությամը եւ նրանց օժանդակելու կարիք եղած ժամանակ»։ Բանաստեղծն ազգանպաստ մեծ գործունեություն է ծավալում հատկապես «Չայոց հայրենակցական միությունների միության» նախագահի պաշտոնում։ 1917–1918 թթ. գրեթե բոլոր հայաիոծ համայնքներում ու գաղթօջախներում գործում էին «Չայրենակցական միություններ», որոնք զբաղված էին Առաջին աշխարհամարտից տուժած հայրենակիցներին ու ծովացյալ գաղթականներին օգնելու, ապաստան տրամադրելու, հանգանակություններ հավաքելու, տարբեր կազմակերպությունների հետ բանակցություններ վարելու եւ կարոտյալներին աջակցելու գործով։ Այդ աշխատանքները կենտրոնացնելու եւ նպատակային ու ճիշտ կազմակերպելու մտայնությամբ 1918 թ. մարտին Թիֆլիսում ստեղծվեց «Չայոց հայրենակցական միությունների միություն»-ը, որի խորհրդի անդամ ընտրվեց Թումանյանը։ 1918–1919 թթ. Յ. Թումանյանը գլխավորում է «Չամաշխարհային պատերազմից հայ ժողովրդի կրած վնասների ըննիչ հանձնաժողով»-ի աշխատանքները։ 1918 թ. հոկտեմբերի 31-ին Յովհաննես Թումանյանի գլխավորությամբ Թիֆլիսում կայացած Չայոց հայրենակցական միությունների կենտրոնակային խորհրդի նիստում որոշվում է Փարիզի Չաշտության վեհաժողովին հայ ժողովրդի կողմից մի հուշագիր կազմելու եւ ներկայացնելու համար ընտրել հանձնաժողով։ Նոյեմբերի 21-ին ստեղծված «Չամաշխարհային պատերազմից հայ ժողովրդի կրած վնասների ըննիչ հանձնաժողով»-ի նախագահ է ընտրվում ամենայն հայոց բանաստեղծը։ Նրա գլխավորությամբ հանձնաժողովը կարճ ժամանակահատվածում կատարում է հերոսական աշխատանք. կողոպտված ու անօթեւան հազարավոր հայ գաղթականներից հավաքում, խմբավորում, իրավական տեսքի է բերում հսկայածավալ փաստական նյութ եւ դրանք տրամադրում Փարիզում հրավիրվելիք հաղաղության վեհաժողովի պատվիրակությանը։

1921 թ. հորհրդային Չայաստանի ժողկոմխորհի նախագահ եւ ռազմական գործերի ժողկոմ Ալ. Մյասնիկյանի հրավերով մեծանուն բանաստեղծը գալիս է Երեւան՝ Չայաստանի օգ-

նության կոմիտե հիմնադրելու համար։ Երկրի անմխիթար վիճակից մտահոգ մի շարք հասարակական գործիչներ, ականավոր մտավորականներ 1921 թ. դիմում են ՅՍԽՅ ժողկոմխորհին հասարակական կազմակերպություն ստեղծելու խնդրանքով, որը, նախեւառաջ, պետք է միջոցներ հայթայթեր սովի ու համաճարակի ճիրաններում հայտնված ժողովրդին փրկելու համար։ 1921 թ. սեպտեմբերի 15-ին ՅՍԽՅ ժողկոմխորին ընդունում է Չայաստանի օգնության կոմիտե (ՉՕԿ) ստեղծելու մասին դեկրետ։ ՉՕԿ-ի հիմնադիր անդամներ են դառնում 77-ը, որոնք պետական եւ հասարակական երեւելի գործիչներ էին, բժիշկներ, ականավոր մտավորականներ՝ Մ. Աբեղյանը, Ալ. Բեկզադյանը, Ս. Տեր-Գաբրիելյանը, Դ. Դեմիրճյանը, Ա. Երզնկյանը, Յ. Թումանյանը, Ս. Կասյանը, Ռ. Մելիքյանը, Ստ. Մախասյանցը, Նար-Դոսը, Մ. Սարյանը եւ ուրիշներ։ ՉՕԿ-ի ստատուտը (կանոնադրություն) հաստատվում է ՅՍԽՅ ժողկոմխորհի 1921 թ. սեպտեմբերի 15 (28)-ի դեկրետով։ Սեպտեմբերի 20-ին՝ ՉՕԿ-ի հիմնադիր ժողովի վերջին նիստին, Ալ. Պապովյանը կարդում է նախագահության խմբագրած շրջաբերականը, իսկ Յ. Թումանյանը ներկայացնում է իր իսկ հեղինակած եւ նախագահության խմբագրած կոչը, որում մասնավորապես ասվում է.

«Աշխարհի ամեն կողմը ցրած հայ ժողովուրդ. Լսիր։

Քեզ է կանչում Չայաստանի Օգնութեան Կոմիտե։

Քեզ է կանչում Չայաստանի մայրաքաղաքում գումարած ամեն հոսանքի հայ գործիչների ու գրականագետների ժողովը։

Եւ գուցէ երբեք դու չես լսել նրանց ձայները այնպէս միացած ու միահանուռ։

Եւ այսքան մեծախորհուրդ մի վայրկեանի։

Լսիր։

Դարաւոր մաքառումներից յետոյ, համաշխարհային պատերազմի թոհ ու բոհից, լայնածաւալ ալեկոծութիւնների եւ աղէտների ծովից գերագոյն ճիգերով բարձրանում է Ազատ ու Անկախ Չայաստանը։

Պատմական այս մեծ օրերին տեղդային իրաւանցումով նրա շուրջն են խռնուում Չայութեան



կենսունակ տարրերը, եւ մի իշխանութիւն տեղի է տալիս միաին։

Սակայն Յ. Օ. Կ. այսօր գալիս է յայտարարելու ի լուր համայն հայութեան, թէ խաղաղութիւնն արդէն հաստատւած է մեր հայրենիքում, եւ նա հաշտ ու համերաշխ յարաբերութեան մէջ է իր հին հարեւան ժողովուրդների հետ։

Եւ արդեն թեւակոխում է իր վերբերը դարմանելու եւ կազդուրելու շրջանը։

Կառավարութիւնը ոտքի է հանելու իր բոլոր ուժերը՝ ժողովրդին ազատելու տիրող եւ մանաւանդ առաջիկայում սպառնացող սովից եւ վերաշինելու քանդած երկիրը։

...Ահա՛ Կոմիտեն ինքն էլ՝ կազմւած է տարբեր քաղաքական հայեացքի մարդկանցից։

Բայց նա լաւ գիտէ եւ այն, որ Չայ ժողովրդին սովից ազատելու եւ քանդած Չայաստանը վերաշինելու գործը վեր է ամեն կուսակցական նկատառումներից եւ քաղաքական տարածայնութիւններից։

Այսպէս էլ մտածելով՝ ամենը եկել միացել եւն այս վսեմ գործի շուրջը, կազմել են ազատ ու անկուսակցական մի հասարակական Կոմիտէ եւ

նստել էին երգող աղջիկներն ու տղաները, իսկ մեջտեղում՝ դեմ դիմաց՝ Մարոն։ Այսօրվա պես հիշում եմ նրանց՝ ավանդական երգի նվիրյալ-հայրուկների դեմքերը. ֆիզիկոս Արմենակ Եղիազարյան, մաթեմատիկոս Չարություն Փանոսյան, տնտեսագետ Ռուդիկ Չարոյան, էներգետիկ-ճարտարագետ Գրիգոր Դարբինյան, բարբառագետներ Անի Չանեյան, Ջենմա Բառնասյան, տնտեսագետ Էլիզա Չախոյան, լեզվաբաններ Յովհաննես Չաքարյան, Սեւակ Ղուկասյան, Վարազանուշ Առաքելյան, Ամալյա Սարգսյան... Շատ չանցած՝ նրանցից շատերն ինձ համար հոգեհարազատ մարդիկ եւ անփոխարինելի ընկերներ կդառնան, քանզի մեզ միմյանց հետ կապելու է հայրենի երգի, մշակույթի հանդեպ սերը...

Առաջին փորձին խումբը երգում էր «Թամազարան»՝ կրկին Վանի կոլորիտային երգերից մեկը։ Արմենակն իր բնատուր, գեղեցիկ ձայնով մեներգում էր.

*Ախչի, ծամդ ծիրանի,
Թամզարա, հայ, Թամզարա,
Ուշք ու միտքս կտանի,
Թամզարա, հայ, Թամզարա...*

Խումբը միանում էր կրկներգին, եւ ստացվում էր մի բնական ու անբռնազոս ներդաշնակություն։ Ընդմիջմանը Մարոն ստուգեց նորեկների, նաեւ իմ լսողությունը։ Կարծես թե ամեն ինչ լավ էր, բայց երբ առաջարկեց որեւէ երգ երգել, մանկությունից հետապնդող սովորությամբ... խնդրեցի մի քանի օրով հետաձգել իմ երգը։ Չետաքրքիրն այն էր, որ ես անգամ ուսանողական երգչախմբում երգելու փորձ ունեի, բայց մեներգելու հետ կապված՝ մի տարօրինակ ֆոբիա միշտ խանգարում էր ինձ։ Շատ բարյացակամ Մարոն միանգամից համաձայնեց, իսկ հաջորդ շաբաթվա փորձերից մեկին, երբ խմբի տղաները երգում էին Տարոնի շատ մեղեդային «Շուշու» սիրերգը, եւ ես լիարժեք ձայնով միանում էի երգողներին, Մարոն անմիջապես զգաց իմ մասնակցությունը, ժպտալով դեպի ինձ շրջվեց եւ ասաց. «Շատ մաքուր երգում ես, ծայրը էլ՝ բաս-բարիտոնային միջակայքում է»։ Այդպես դարձա ակունքական, իսկ մեներգելու ֆոբիան հաղթահարեցի մոտավորապես մեկ տարի անց, երբ ինձ անգամ մի քանի մեներգ վստահվեց...

Վաթսուռականների արձակագիրներ. Ժամանակը եւ հերոսը

կայանում, կյանքի ամենօրյա կարուսելի մի հանգույցում՝ կանգառում, այդ հարաբերությունները կարող են ձեւավորվել երրորդ հարկի պատուհանից մայրոդ տղայի եւ այդ պատուհանի դիմաց ամբարձիչ կռուկն աշխատեցնող աղջկա, փոքր սենյակը երկու մասի բաժանած ամուսնալուծված ամուսինների, կյանքի ապրած տարիները վերհիշող եւ հանկարծակի մեկը մյուսի մեջ հոգեբանական հիմն ու մոռացված կապեր հայտնաբերող մարդկանց միջեւ։ Այս վիճակներն ու հարաբերությունները, անշուշտ, արտաքին փաստ են, կարելի է այդ վիճակների ու հարաբերությունների գեղարվեստական մարմնավորման խնդիրն է եւ գրականության համար արտաքին մշակակություն ունեցող նյութի եւ մոր թվացող իրողությունների հարցը ներքին խորությամբ լուծելու կարողությունը։

Եթե ժամանակակից կյանքը Պետրոսյանի մի շարք պատմվածքներում, «Քաղաքի կիսաբաց լուսամուտները», մասամբ նաեւ «Մամա, ես արդեն մեծացել եմ» վիպակներում նկարագրվում է որպես սոսկ պատմություն, առանց հոգեբանական ու վերլուծական խոր թափանցումների, ապա կյանքի արտաքին տվյալների աստիճանական գեղարվեստական յուրացումն արդեն առավել հասուն որակ է ստեղծում «Ապրած եւ չապրած տարիներ», «Հայկական էսքիզներ» ստեղծագործություններում եւ մի շարք այլ գործերում։ Ժամանակակից կյանքի գեղարվեստական յուրացումն արտաքին ու ներքին շերտերի ճիշտ տարբերակմամբ բավականին երկարատեւ ու դժվարին ընթացք է, այդ կյանքը մախ ներկայանում է որպես կյանքի փաստ եւ ապա աստիճանաբար յուրացվում որպես գեղարվեստական իրականություն։

Պետրոսյանի հիմնական մախասիրություններից մեկը երիտասարդության, կյանք մտնող մոր սերնդի ապրած վիճակների պատկերումն է։ Այս տեսակետից առանձնանում են մրա «Քաղաքի կիսաբաց լուսամուտները», «Մամա, ես արդեն մեծացել եմ» եւ «Դեղատուն «Աճի» վիպակները։ Այս խնդիրն իր արտացոլումն ունի նաեւ մրա մյուս երկերում։

«Մամա, ես արդեն մեծացել եմ» եւ «Դեղատուն «Աճի» վիպակները ներքին որոշ կապերով մեկը մյուսի շարունակության տալիսություն են թողնում։ Ներքին կապը բխում է այն ընդհանրությունից, որ առկա է նյութի մեջ։ Առաջին վիպակում ներկայացվում են դարձյալ հասակ պատահիներ, ովքեր սովորում են ավարտական դասարաններում եւ մախապատրաստվում մտնելու կյանք, իսկ երկրորդում՝ մոյս այդ

երիտասարդները կամ մրանց մամներն են, որ մոր-մոր ավարտել են դպրոցը եւ մտածում են կյանքում իրենց տեղը ճշտելու մասին։ Ներկայացվում են այսպիսի իրավիճակներ։ Մի կողմից՝ ժամադրության շտապող պատահիներն ու պարմանուհիներ, ժամանակի հոգիների բռնկումներ, հերոսության ու վեհության զգացողություն, մյուս կողմից՝ արտաքին աշխարհի հետ այդ ամենի բախում, դպրոցում սովորածի, կյանքի տեսության եւ առկա վիճակների, գործնական կյանքի հակադրություն։ Ահա այս կենսական ոլորտների մեջ են ձեւավորվում «Մամա, ես արդեն մեծացել եմ» վիպակի հերոսների կերպարները։ Ի վերջո պատահի հերոսների եւ շրջապատի միջեւ հատկացող առճակատումը, առանց վերածվելու կտրուկ բախման, գտնում է իր լուծումը. հերոսներից մեկը՝ Արամը, չհամակերպվելով հոր միջոցառությամբ բարձրագույն դպրոց ընդունվելու մտքին (ինչն անիրական է), հեռանում է տնից եւ գնում մի ծանոթ երկրաբանի մոտ։ Այս որոշումը նա կայացնում է անքուն մի գիշերից հետո, երբ փորձում է համատեղել կյանքի առաջադրած բազում ճշմարտություններն իր ճշմարտության հետ։ Կյանքի ճշմարտությունները հակասական են, քանի որ տարբեր են այդ ճշմարտությունները կրողները՝ մախ դա հոր ճշմարտությունն է, ինչը հիմքում երկփեղկված է. այն մեկ ձեականերավում է որպես պաշտոնական խոսք եւ մեկ՝ որպես հարազատի խոսք՝ ասված որդուն, այդ ճշմարտության կրողներ են նաեւ ուսուցիչներն ու տարբեր մարդիկ։ Սակայն մրանց ճշմարտությունները միշտ չէ, որ վստահելի կողմնացույց կարող են լինել կյանք մտնող երիտասարդների համար։ «Դեղատուն «Աճի» վիպակի հերոսները, որոնց տարիքը տատանվում է 18–22-ի միջեւ, գալիս են փոխարինելու մախորդ վիպակի 17 տարեկան շրջանավարտներին։ Այս վիպակի հերոսներն ուսանողներ են կամ ձախողված դիմորդներ, ովքեր դեռեւս չեն կորցրել ուսանող դառնալու հույսը։ Այդ ձախողված դիմորդները դարձել են քարտուղարուհի, սրբագրիչ։

Այդ երիտասարդների մեջ ձեւավորվող հիմնական հարաբերություններն ունեն սիրային-մտերմական բնույթ։ Նրանք հանդիպում են, երեկոներ կազմակերպում են այդ վիճակների մեջ



բացահայտում կյանքի զգացողության եւ իմաստավորման իրենց ձեւերն ու սկզբունքները։ Վիպակի կառուցվածքն այնպիսին է, որ խոսքի մեջ ընդգրկված բոլոր հերոսներին հնարավորություն է ներկայացվում առանձին-առանձին դրսևորելու, բացահայտելու ինքն իրեն եւ մեկնաբանելու իր եւ ընկերների պահվածքը։ Վիպակի ամեն մի գլուխը վերնագրված է որեւէ հերոսի (Աճի, Կարեն, Լիլիթ, Անահիտ, Արթուր) կամ հերոսների (Հասմիկ, Մամբրե) անուններով։ Պատմում են իրենք՝ հերոսները, որոնց մեջ կյանքը դեռեւս նստվածք չի տվել, եւ մրանք ավելի շատ ներկայանում են դատարկապորտ, պարապ մարդու տեսքով։ Նրանք դեռեւս թեթեւ են պատկերացնում կյանքը, եւ կյանք կոչվածը մրանց համար դեռեւս օժառի պղծաբանի պես մի բան է։ Ի վերջո, այդ կիսատ, թերի ու անկազմակերպ մարդկանց մեջ հասունանում ու ձեւավորվում է սպասվող հարցը. «Ո՞վ ենք մենք, ի՞նչ ենք ուզում իրարից, այս աշխարհից...» («Դեղատուն «Աճի»)։ Սա արդեն մշակակում է, որ կյանքը մակերեսորեն ճանաչող մարդիկ ինքնագիտակցության գալու փորձեր են անում եւ ցանկանում ճշտել իրենք իրենց, իրենց հարաբերություններն ու պահանջները։ Իսկ այս ճշտումը երկարատեւ ու վերջնական սահման չունեցող ընթացք է եւ պահանջում է անընդհատ խորացում սեփական անձի, ապրած վիճակների եւ ձեւավորված հարաբերությունների տարբեր շերտերի մեջ։ Հոգեվերլուծական եւ գոյափիլիսոփայական խորացումների «Դեղատուն «Աճի» վիպակի հերոսները դեռեւս ընդունակ չեն։ Այդ խորացումը շարունակվում է արդեն կյանք մտած մեկ այլ հերոսի՝ Լեւոն Շա-

հինյանի աշխարհընկալման մեջ, որով եւ պայմանավորվում է «Ապրած եւ չապրած տարիներ» վեպի հոգեբանական հասունությունը մախորդ գործերի համեմատությամբ։

Վերոհիշյալ երկու վիպակների կապակցությամբ ավելացնեմք, որ հեղինակը, իր հերոսների տարիքին համապատասխան, մնացել է ժամանակական տարբերի մեջ։ Հեղինակային հայեցակետը տեղը զիջել է պատմական տարիքի հերոսների՝ շատ դեպքերում անխոհեմ գործողություններին։

Այս ժամանակական տարբերը ցանկալին ներկայացրել է որպես իրականություն։ Հենց թեկուզ այն հանգույցը, երբ պատմին հրաժարվում է հոր միջոցառությամբ ընդունվել բարձրագույն դպրոց։ Այդպիսի օրինակներ չկան, իսկ մտացածինը բնութագրական չէ։ Այստեղից էլ հեղինակի կտրվածությունն այն իրականությունից, որի անունից խոսում է։ Վեհերոս մի վրիպանք կա այս ամենի մեջ։

Լեւոնը թերի աշխատակից է՝ մտավոր բարձր զարգացում ունեցող մի մարդ։ Նրա եւ արտաքին աշխարհի հարաբերությունները ձեւավորվում են տարբեր ոչ միագիծ ուղղություններով, որոնք եւ դառնում են վիպական պատումի գլխավոր առանցքները։ Առաջինը Լեւոնի եւ խմբագրության առանցքն է՝ Լեւոնի եւ խմբագրի հարաբերությունը եւ Լեւոնի կողմից սիրահար զույգի՝ Հասմիկի ու Սերոբի ինքնասպանության պատմությունը, երկրորդը՝ Լեւոնի եւ հիվանդ եղբոր առանցքն է, երրորդը՝ Լեւոնի եւ դարձյալ ցանկալի ընկերների։ Լեւոնի վարքագիծն ու մտածելակերպը ձեւավորվում է աշխատանքային, ընտանեկան, ընկերական, սիրային եւ հանրային կյանքի ոլորտներն ընդգրկող հարաբերությունների մեջ։ Այդ հարաբերությունները փոխներթափանցված են, ամբողջ վիպական հյուսվածքի մեջ շարունակում ու լրացնում են մեկը մյուսին եւ միախառնվելով ամբողջացնում ու հարստացնում Լեւոնի նկարագիրը։

Ո՞վ է Լեւոն Շահինյանը՝ մի սերնդի ներկայացուցիչ, ով իր մեջ մարել է 1937 թվի եւ պատերազմի հեռավոր արձագանքները, մի մարդ, ով ներքաշված ինքն իր մեջ, բայցեւ կյանքի փաստերի իմացությամբ փորձում է վերլուծել մոյս այդ կյանքը եւ հասկանալ այն։ Իսկ կյանքը հասկանալը մրա համար մշակակում է լուծել «բազմաթիվ անհայտներով մի հավասարում», ինչը, սակայն, չունի միակ ու ճշգրիտ պատասխան։

Շարունակելի

Դավիթ ԳՍԱՊՐԱՆՅԱՆ

Սփյուռքահայ գրականության դասնության ուրվագծեր



Սփյուռքահայ գրականության առաջին տասնամյակները՝ մասնավորապես մրա կազմավորման շրջանը (1920-ական թվականներ) եւ մասամբ համալրման շրջանը (1930-ական թվականներ, մինչեւ երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտը), համեմատաբար ամենից քիչ են ուսումնասիրված եւ կարոտ են գիտական լուրջ հետազոտման։ Ճիշտ է՝ այս շրջանների որոշ հեղինակներ այս կամ այն չափով հայտնի են թե՛ հայրենիքում, թե՛ Սփյուռքում, բայց եւ այնպես դեռեւս ասպարեզում չկա ժամանակաշրջանի գրական գործընթացն իր բարդություններով ու ներքին հակասություններով ամբողջացնող գիտական ուսումնասիրություն։ Ավելին՝ այս ժամանակաշրջանի Սփյուռքի գրականության հայտնի անուններից շատերի մասին եւս չկան ուսումնասիրություններ եւ մեմագրություններ։

Այս երեւույթի պատճառները պարզ են. Սփյուռքի համար բարենպաստ պայմանների բացակայություն, մտավորականության առջեւ ծառացած առօրյա ապրուստի հոգսեր (գրականությունն ու գրագիտությունը երբեք մասնագիտություն չեն եղել՝ չհաշված բացառություններ

րը), գրաքննադատական կայուն մտքի բացակայություն, քաղաքական սրված կրքեր, որոշ գաղութների մեջ (Թուրքիա) փակ պայմաններ։

Սփյուռքի մասնատվածությունը, նյութերի պակասը, անտարակույս, քիչ դեր չեն խաղացել եւ այսօր էլ շարունակում են խաղալ մշակված գրականության ուսումնասիրության գործում։ Խոսում է այն փաստը, որ ավելի քան հարյուր հազար վավերագրեր Ե. Չարենցի անվան գրականության ու արվեստի թանգարան են բերվել 1965–1980 թվականների ընթացքում՝ սփյուռքահայ մշակութային կազմակերպությունների եւ անհատ գործիչների ջանքերով։ Այդ վավերագրերը, որոնք գոյություն ունեցածների միայն մի

մասն են, մոր են դրվում գիտական շրջանառության մեջ։

Սփյուռքահայ գրականության պատմությունը, մեր պատկերացումով, ընդգրկում է երեք առանձին ու կարելի շրջան.

- սփյուռքահայ գրականության կազմավորման շրջան,
- սփյուռքահայ գրականության համալրման շրջան,
- սփյուռքահայ գրականությունը երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից մինչեւ մեր օրեր։

Սփյուռքահայ գրականությունն արդյունք է հասարակական որոշման պայմանների, դրանց անմիջական հետեւանքն է, ուստի եւ սկսվում է քսանական թվականներից, թերեւս մոյսինսկ 1918 թվականից։

Սփյուռքի առանձնահատկությունը հիմնալի է բացատրել ամերիկահայ հարահայտ հասարակական գործիչ ու գրող Անդրանիկ Անդրեասյանը. «Գաղութահայ գրականությունը, իբրեւ խորը ու հորջորջում, ծագում առավ այն ատեն, երբ ամբողջ արեւմատահայությունն ինչ որ վերապրեց անկե — յաթաղաններու մոլեգնութենն

ու տարագրության մահաշուք ճամփաներեն վերածվեցավ գաղութահայության, ժողովրդին մայր զանգվածը, իր դարավոր բնակավայրերն արմատախիլ, հողմացրիվ հալածվեցավ դեպի օտար, մռայլ ափեր, ուր հոգեկան ու ֆիզիկական ուժացումի ահավոր սպառնալիքը պիտի դիմագրավեր։ Եվ ստեղծվեցավ հայկական սփյուռքը,—հսկայական մարմին մը, բայց անկենտրոն, ծվատված, ինքնագործ անդամներով։ Մահիկի մակաբույծ հորդաներեն հափշտակված հայրենիքը եղերականորեն ամայի ու ավերակ։ Անոր հարազատ տերը իբրեւ հայրենագուրկ խլյակ դարձավ այլեւս ֆրանսահայ ու հունահայ, ամերիկահայ եւ եգիպտահայ, տուրիստ ու սփյուռք։ Եվ բոլորն ալ դատապարտված ֆիզիկական ու մտավորական կղզիացման, առանց թարմ արյունի ու ոգիի հույսին, որ պիտի կրնար գալ մայր բնագավածեն, եթե սփյուռքում ունենար այն իր բնաշխարհին մեջ...»

Այսպես, 1920-են հետո, արտասահմանի մեջ կատարված բոլոր ազգային շարժումներում եւ ստեղծագործական ճիգերումն նման գրականությունն ալ ինկավ գաղութահայ պիտակին տակ եւ անխուսափելիորեն ենթարկվեցավ այդ վիճակին ժխտական ազդեցությանը»։

Այդ ժխտական ազդեցությունից դուրս գալու եւ սփյուռքահայ գրականության մեջ իր լուսման մուծելու համար պոլսահայ գրականությանը հարկ եղավ տալը եւ ավելի տարիներ՝ մինչեւ 1931 թվականը։

Հեշտ չէր այդ մոր գրականության ստեղծման ուղին՝ մանավանդ Ստամբուլում։ Այդ մասին է վկայում նաեւ Եղիշե Չարենցը 1924 թվականին Աշ. Հովհաննիսյանին Կ. Պոլսից գրած իր նամակը. «Թե՛ որքան ողորմելի է այստեղ հայ գաղութի կյանքը՝ դժվար է պատկերացնել։ Մարդիկ պարզապես քարշ են տալիս սովորային խղճուկ մի գոյություն... կառավարությունը, թուրք հասարակությունը, մամուլը եւ այլն, աշխատում են պահպանել նրանց արհամարհանքի, իրավական տեռորի, պռոպակացիաների, հայիոյանքների

այնպիսի մի մթնոլորտում, որից մարդու մազերը կարող են, ինչպես ասում են, բիզ-բիզ կանգնել։ Եվ զարմանալի չէ, որ այդպիսի մի մթնոլորտում հայ գաղութը կորցրել է հասարակական կազմակերպություն լինելու ամենատարակական ատրիբուտներն անգամ,— ոչ ժողով, ոչ դատախոսություն... եւ այստեղ հանդիպեցի մի շարք մտավորականների հետ. խեղճ, ծեծված, սովերային գոյություններն են դրանք, որոնց աչքերում սարսափն ու քծնությունը պսպրում են ու հայցում, հայցում, հայցում...»։

Ահա այն պատճառները, որոնք ուշացրին Կ. Պոլսում սփյուռքահայ գրականության սկզբնավորումը, բայց վերջապես այդ գրականության սկզբնավորումը Ստամբուլից չէր, որ սկիզբ առավ ու հիմնավորվեց։

Սփյուռքահայ գրականությունը մի տեղ սկսվեց 1918 թվականից, մի այլ տեղ ավելի ուշ՝ քսանական թվականների կեսերից, եւ պատահեց նաեւ, որ մի այլ վայրում այն հանդես եկավ երեսնական թվականներին։

Այդպես էլ պետք է լիներ. այդպիսին էին աշխարհագրական, քաղաքական, տնտեսական, հոգեբանական գործոնների պահանջները։ Հարկ էր, որ երեսան գար մոր պայմանների ծնունդ, մրա մեջ կազմավորվող մոր մարդիկ՝ Սփյուռքի հայը, որպեսզի ստեղծվեր մոր գրականությունը, որն իր մոր լինելու համար էլ անվանվեց ոչ թե հայ գրականություն կամ դիտվեց որպես արեւմտահայ գրականության շարունակություն, այլ հանդես եկավ մոր որակով եւ կոչվեց սփյուռքահայ գրականություն։

Սփյուռք մշակակում է ցիրուցան։ Սփյուռք եւ սփյուռքահայ հասարակություններն արդյունք են պատմական դաժան եղելությունների։ Այստեղից ծնունդ առավ հայ ժողովրդի պատմության մեջ մի մոր որակի մարդ՝ իր ուրույն հոգեբանությամբ, մտածելակերպով, բոլորովին տարբեր ավանդական բառերով, աշխարհագրական որոշ ու կայուն հայերենի հողատարածության վրա ապրած հայրերի հոգեբանությունից ու աշ-

Սփյուռֆահայ գրականության դասնության ուրվագծեր

խարհընկալումից: Դա վերապրող հին սերունդ, չէր, դա գաղութահայ այն պատանին էր, երիտասարդը, սփյուռքահայը, որ զավակն էր տարագրվողի, որ որբուն էր անապատի, որ տեսել էր կոտորած ու ավեր, արյուն ու ավար, տեսել էր որբանոց ու հալածանք, իրեն գտել էր Ամերիկայի կամ Եվրոպայի հարուստ ոստաններում եւ դեմ էր առել անբանաձեւելի մի մղձավաճիչ: Ավելիմ՝ նա հաճախ քաղաքացի էլ չէր այն երկրների, ուր մատնվում էր բախտի թմահաճույքին՝ մի անհեռակար քաղաքացիականությամբ, որ կոչում էր մեծ մարդասերի անունով՝ նանսենյան հպատակություն...:

Սփյուռքահայն ապրում էր ամառազատ, անդէկ գոյությամբ: Քաղաքականորեն մշուշոտված նրա տեսողության առջեւ գրեթէ վարագորվել էր աշխարհին ու հայ ժողովրդին հոկտեմբերյան հեղափոխության պարզեւած շրջադարձը, որի շնորհիվ՝ նույն ճակատագրի զոհը լինելուց փրկված արեւելահայության մեծագույն մասը:

Հեղափոխության շունչն առավել զգալի դարձավ արեւելահայ գրականության առաջին տասնամյակի երկրորդ կեսից սկսած: Թեպետ դրանից առաջ էլ նրա արձագանքները մերթ ընդ մերթ հնչում էին հայատառ մամուլում, բայց մասսաների վրա նրա ազդեցությունը եւ հետքը չորշափելի դարձավ, երբ որոշ կապեր ստեղծվեցին հայրենիքի եւ Սփյուռքի միջեւ: Այդ կապը, մասնավոր փոխայացություններով, հիմնավոր դեր կատարեց:

Ահա այդ ցիրուցան եղած նոր մարդու կյանքից ու ապրումներից էլ ծնվեց սփյուռքահայ գրականությունը:

Հարյուրավորների բազմությունից անջատված մոտ երկու տասնյակ գրողները հանդիսացան սփյուռքահայ գրականության սկզբնավորողները: Դա, անկասկած, փոքր քանակ չէր որբեւ գրականության որոշ ժամանակահատվածի համար: Քանակ, որ միաժամանակ եւ որակ է հատկանշում, այնպիսի որակ, որի մասին կարելի է դատել՝ մշտնվ միայն մի քանի դեմքի՝ Արամ Յայկազ, Վահե Յայկ, Յակոբ Մնձուրի, Սիրան Սեզա, Կոստան Ջարյան եւ ուրիշներ: Այդ ուրիշների մեջ կային այնպիսիներ, որոնք հետագա տասնամյակներում դարձան այդ գրականության հիմնական դեմքերը: Այդ բոլորի մեջ միայն բացառություն էր Կոստան Ջարյանը: Նա սփյուռքահայ սերունդ չէր: Կոստան Ջարյանն անուն ու

վաստակ ուներ, երբ մուտք գործեց գաղութահայ գրականության մեջ, ծնվել էր Կովկասում, գրող, որ չէր պատկանել հին սերնդին եւ միանգամայն դուրս էր նորից: Բայց Կոստան Ջարյանը, մեր կարծիքով, հակառակ նրան վերագրված շփոթին, հայ գրականության մեջ մնում է որպէս սփյուռքահայ գրող, թեկուզ իր «Տատրագոմի հարս»-ով, որովհետեւ այդ վիպերգը սփյուռքահայ բանաստեղծության մեջ խաղաց նույն վճռական դերը, ինչ որ ունեցավ վեպի ժանրում Շահան Շահնուրի «Նահանջ առանց երգի»-ն պատմվածքում՝ Համաստեղի «Գյուղը» եւ «Անձրեւը» գրքերը եւ այլն:

Եթե հայ գրականության պատմությունը, ինչպես որեւէ այլ ազգի գրականության պատմություն, իր որեւէ հանգրվանում օղակն է իր նախորդի եւ իր հերթին օղակը հաջորդի, ապա այս դեպքում, Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին մեր գրականությունում ամբողջականությունը կազմող երկու հատվածներից մեկի՝ արեւմտահայ կյանքի ու գրականության օղակը ջարդվեց: Չմայած այն իրողության, որ մնացորդացից ոմանք հանդես էին գալիս որպէս արդեն սփյուռքահայ կյանքի ու գրականության կազմակերպիչներ: Դրանցից ամենզգալիորն Արշակ Չոպանյանն էր: Սփյուռքահայ կյանքի շայնաններում Չոպանյան գրողն ու բանաստեղծը մնացին երկրորդական պլանի վրա, իրենց տեղը գիշերով բանասերին, որ տվեց մի շարք փայլուն ստեղծագործություններ: Նա էր՝ Արշակ Չոպանյանը, որ միաժամանակ վիթխարի աշխատանք կատարեց հայ գրականության եւ մշակույթի արժեքներն օտարներին ծանոթացնելու, ինչպէս նաեւ գրական հասակ առնող նոր սերնդի դաստիարակությունն ու ուժը կազմակերպելու ուղղությամբ: Ա. Չոպանյանի իրապարակած «Անահիտ» հանդէսը դարձավ կազմավորվող սերնդի գրական դպրոցը:

Նույնամանա դեր վիճակվեց նաեւ Վահան Թեքեյանին: Նա մեծ էր արդեն որպէս արեւմտահայ բանաստեղծ, իհարկէ դա հասկանալի էր, բայց հանդիսացավ նաեւ մեծագույն լուսման մուծողը սփյուռքահայ գրականության մեջ: Եվ սա ոչ թէ այն պատճառով, որ Սփյուռքում տվյալ շրջանում եւ հետագայում հարաբերաբար չկային մեծություններ, այլ՝ որ Վահան Թեքեյանի մեծությունը սփյուռքահայ պոեզիայում իմացական խորք ուներ, նա մեծություն էր՝ ուղի մշող, ճաշակ

դաստիարակող ու տարածող ուսուցչապետ, որ հայելու դեր էր կատարում, ոգեղեն ու ոգեղենացած, որտեղ բեկվում էին մեր ժողովրդի բնածին լայնախոհությունն ու մարդասիրությունը՝ այնքան վշտեր ու դառնություններ կրելուց հետո: Հայ պատմագրությունից, ինչպէս նաեւ բազմահատոր սփյուռքահայ պատմագրությունից մնան օրինակներ ու մեջբերումներ շատ կարելի է կատարել: Ինչ վերաբերում է գրականությանը, ապա անհրաժեշտ է մշել, որ հայ նոր գրականության սկզբնավորման եւ հետագա զարգացման համար, ինչպէս նաեւ այս վերջինիս միջոցով սփյուռքահայ գրականության վրա բարերար ազդեցության առումով մեծ դեր է ունեցել ռուսական դասական գրականության պուշկին-գոգոլյան ուղղությունը, նույնպիսի նշանակություն է ունեցել նաեւ Մ. Գորկու, Վ. Մայակովսկու, Ա. Ֆադեևի եւ մյուսների անուններով նշանավորված ռուս գրականությունը:

Իհարկէ, սրանով չի սահմանափակվում սփյուռքահայ գրական մամուլում ռուսական եւ ընդհանրապէս սովետական գրականության արդարագանդումը, երբ մասնավոր պարզ է, թէ այն ինչպիսի մեծ թափ է ստացել երկրորդ համաշխարհային պատերազմից հետո՝ մասնավորապէս առաջադիմական մամուլում, բայց թերեւս այսքանն էլ բավական է որոշ կարծիք կազմելու համար:

Քսաներորդ դարի քսանական թվականների սկզբին աշխարհը բաժանվում էր հիմնական երկու գաղափարապէս, տնտեսապէս բոլորովին ներհակ ճակատների, պայքարի երկու հակադիր բեւեռների, որոնք կանգնել էին դեմ հանդիման: Բայց պատմությունը, գիտությունը, մարդկային մտքի ընթացքը ցույց էին տալիս, որ այդ ճակատներից հաղթող էր դուրս գալիս նորը, առաջընթացը, սոցիալիստականը, եւ կամա թէ ակամա կործանվելու էր կապիտալիզմը, որը հասել էր իր քայքայման բարձրակետին:

Հոկտեմբերյան հեղափոխության փրկարար սուտը, ընդմիշտ կտրեց հայ քնարի լացի ու մորմոքի լարերը, թախծի դարավոր ամպը հոկտեմբերյան մորիկներից հալածական, ընդմիշտ չքացավ հայ գրականության երկնքը: Ստեղծվեց իր որակով բոլորովին նոր, կենսախիճը, պայծառ հեռանկարներով, բազմակողմանի թեմատիկայով, միջազգայնական գաղափարներով հարուստ մի գրականություն:



Սարգիսը

Սարգիս Բաղդասարյանի երգն առաջին անգամ լսել էի «Գորանի» ֆիլմում: Նրա ծայրը կարծես մեր ժողովրդի պատմության վաղմջական ժամանակներից էր գալիս, եւ ինձ թվում էր՝ մեր հեռու-հեռավոր նախնիների երգն էի լսում նրա շուրթերից...

Ժամանակին Մարոյի ուսանողն էր եղել Սարգիսը համալսարանի բանասիրականում, եւ դեռեւ «Ակունքի» պաշտոնական ստեղծումից մի քանի տարի առաջ Լեզվի ինստիտուտում Մարոյի հետ խմբի «Նախօրինական» էին ստեղծել: Հենց այդ տարիներից էլ Սարգիսն իր աջակցությունն էր հայտնել Մարոյին՝ ապագա խմբի ստեղծումը ծրագրելիս: Մարոն իր գործունեությունը բնականաբար ծավալեց՝ հենվելով նաեւ խմբի հիմնադիր կազմի նմիդայ անդամների աջակցության վրա, որոնցից մեկն էլ հենց Սարգիս Բաղդասարյանն էր՝ արմատներով սասունցի, Տարոն աշխարհի երգերի տոհմիկ կրող եւ գիտակ, որ այդ ժամանակ նաեւ հայտնի երգասացի համբավ ուներ:

Այն, ինչ արեց Սարգիսը «Ակունքի» տասնամյակներում, թեւէ զնախատվեց (հանդիսատեսի մեծ համակրանք, ակունքցիների արդեն մի քանի սերունդների մեծագույն հարգանք, իր արժանի եւ անփոփոխ տեղն ունեցող մեմերգիզի համբավ, մշակույթի վաստակավոր գործչի կոչում), իրականում անգնահատելի էր: Ժողովրդական

երգի մաքրամաքուր ակունքներից բխող երգառճը կրող խմբի առաջատար անդամն ու մեկակատարը տարիներ շարունակ եղել է նաեւ «Ակունքի» սուփրենն ու կազմակերպիչը, դժվար իրավիճակներում համույթի անփոխարինելի խորհրդատուն, այսօր արդեն՝ նաեւ նահապետն ու խորհրդանիշը:

Այս ամենի հետ մեկտեղ՝ Սարգիսը հունորի առանձնահատուկ զգացումով օժտված անձնավորություն էր, նա անգամ շատ դիվանագիտորեն կարողանում

էր կարգավորել խմբում երբեմն-երբեմն ի հայտ եկող միջանձնային հակասությունները:

Նման մի օր, երբ կարեւոր համերգ ունեինք, ես խմբի տղաներից մեկից խիստ նեղացել էի: Իսկ մնա՞ն դեպքերում, երբ իմ դեմքին «անկեղծորեն» արտատպվում էր իմ տրամադրությունը, միայն Սարգիսը կարող էր փրկել իրավիճակը:

Երբ համերգի առաջին հատվածի «լուրջ» թագվորագովքին ու ազգային-հայրենասիրական երգերին հաջորդեց Վանի «Քյոշ, կընա, օտար» կատակերգը, կողքիս կանգնած Սարգիսը նկատելով, որ իմ դեմքը շարունակում է մռայլ մնալ, ինչ աներ, որ լավ լիներ. կատակերգի «Ենքյան» նստար, չուր քյանոտար» տողի բառերը հանպատաստից այնպէս «խմբագրեց» ընդամենը մի հնչյունի փոխարեն մեկ այլ հնչյուն արտասանելով եւ երգի ընթացքում մերթնդմերթ հայացքը գցելով ինձ նեղացնողի վրա, որ դեմքս ամսիջապես ճիշտ եւ ճիշտ կատակերգի ժանրին հարկի արտահայտություն ստացավ: Այդպէս փրկվեց եւ երգի, եւ իմ տրամադրությունը:

Իմ ու Անուշիկի ծախողված «սիրավեպը»

1979-ի սեպտեմբերն էր: Գառնիի ծորում նկարահանվում էր առաջին ֆիլմ-համերգը՝ այն էլ

Մոսկվայի՝ Կենտրոնական հեռուստատեսության համար:

Երիտասարդ ռեժիսոր Նիկոլայ Դավթյանը, սցենարիստ Կորյուն Խումարյանը, օպերատոր Մելս Ներսիսյանը եւ մեր ողջ խումբը եռուգեղի մեջ եւ:

Նկարահանման հերթը «Մոկաց սիրերգին» է՝

*Սարեն կիզեր ձիավոր՝ արծվու պես թեւավոր,
Դոյ-լայ-լայ, լա-տիրի-րի, լարի-լայ,
Ձորեն կիզեր թուխ Սամին՝ արեւու շողն իրեսին,
Դոյ-լայ-լայ, լա-տիրի-րի, լարի-լայ...*

Թեք սարալանջին խումբը պետք է շուրջպար բռներ, Արմենակը մեներգելով իջներ լանջով, իսկ ռեժիսոր Նիկոլայ Դավթյանի եւ Մարոյի անբեկանելի որոշմամբ «սարեն եկող» հիշյալ ձիավորի դերում... ես պետք է նկարահանվեի: Արդեն վաղուց լուծել էին ձիու հարցը. անտառապահն իր ձիու հետ նկարահանման հրապարակ էր հրավիրվել: Մի խոսքով՝ ամեն ինչ մանրակրկտորեն նախապատրաստվել էր:

«Ձորեն եկող» Ասմինի գործը շատ հեշտ էր: Հին հնդկերենի մասնագետ Վարագանուշ Առաքելյանը՝ մեր ամենահայնական դիմագծերով, միշտ լուռ ու խոհուն Անուշիկը, ուղղակի ծաղիկներ փնջելով անցնելու էր ձորով, իսկ, այ, «սարեն եկող» ձիավորին գործը շատ դժվար էր եւ անչափ վտանգավոր: Ես, որ իմ ծննդավայրում, բացի մեր անվանակից, ուրիշ ոչ մի «տրամսպորտային» կենդանու չէի վստահել իմ անվտանգությունը, այստեղ պետք է ձի նստած՝ փայտե ճոճվող կամրջով անցնեի՝ այն էլ Անուշիկին ուղղված ժպիտով ու փրահարված հայացքով:

Առաջին փորձին անտառապահը՝ ձիու սանձը բռնած, ես՝ թամբին, համապատասխան կեցվածքով ու հայացքով, կարծես թէ բարեհաջող անցանք կամրջով: Երկրորդ անգամ, երբ անտառապահը ձիունք մի քանի քայլ առաջ՝ առանց սանձը բռնելու էր անցնում, մի պահ ձիւն՝ իր համար անսովոր իրավիճակում, կանգ առավ: Անմիջապէս զգալով, որ սա առանց իր տիրոջ այդ կամրջով անցնողը չի, առանց այլեւայլության... հրաժարվեցի արդեն կամաց-կամաց հարազատացող իմ դերից: Շվարած Մարոն այս անգամ Գրիգորի կողմը մայեց: Եներգետիկ-ճարտարագետ, մեներգիչ Գրիգորն ամսիջապէս հանձն առավ իմ ծախողած դերը:

Բայց հանձն առնելն ուրիշ բան էր, իրականացնելը՝ այլ: «Սիրահարված» Գրիգորին կամր-

Սփյուռքահայ գրականությունը մեծ զարգացում էր ապրում նաեւ Ֆրանսիայում, ուր, եղեռնից մազապուրծ հայ ժողովրդի մի ստվար զանգված խաղաղ հանգրվան էր գտել բարեկամ ժողովրդի մոտ: Ֆրանսիայում երեսնական թվականների կեսերին կազմվել էր ժողովրդական ճակատ, որն իր հերթին կարողացել էր երկրի դեմոկրատական եւ առաջադեմ ուժերը միավորել ընդդէմ հետադիմական ուժերի: Այստեղ 1935 թվականի հուլիսի 1-ին Միսաք Մանուշյանը հրատարակեց «Համգու» բանավորական թերթը:

Պետք է նկատել նաեւ, որ քսանական թվականների սկզբից իսկ սփյուռքահայ կյանքի դժվարին պայմաններում, թեկուզ միայն Կ. Պուտում, կար թարգմանական բազմախարուստ գրականություն Գյոթեից, Յուգոյից, Մոպսաս-նից, Չոլայից, Մոլիերից, Տոլստոյից, Դոստաևսկուց, Գորկուց, Չեխովից, Կուպրինից եւ համաշխարհային գրականության այլ դասականներից: Իսկ սփյուռքահայ գրականության սկզբնավորման տարիներից էլ լույս էին տեսնում մի քանի տասնյակի հասնող, մերթ շատ կարճ կյանք ունեցող, մերթ էլ՝ երկարակյաց բազմաթիվ թերթեր, ամսագրեր ու պարբերականներ, ինչպիսին էին, օրինակ, «Հայրենիք»-ը, «Նոր աշխարհ»-ը, «Ձվարթնոց»-ը, «Նոր օր»-ը, «Փյունիկ»-ը, «Աշխատանք»-ը, «Ծիածան»-ը, «Հունահայ տարեգիրք»-ը եւ այլն:

Սփյուռքահայ գրականության առաջին տասնամյակը մասնավորապէս, իսկ հետագայում՝ ընդհանրապէս, իր գլխավոր գրական բերքը քաղեց հիմնականում հայ ամսագրերից ու շաբաթաթերթերից, նույնիսկ՝ ամենօրյա մամուլից: Դա պոռթկումի շրջան էր, անհաշվեառ պոռթկումի...: Բանաստեղծություն, պատմվածք, վիպակ, վիպերգ եւ թատերգություն, ապա եւ՝ առատ հուշագրություն:

Այսպիսով՝ սփյուռքահայ գրականության կազմավորման հիմնական օջախները հանդիսացան երկուսը՝ Ամերիկայի Միացյալ Նահանգները եւ Ֆրանսիան: Քսանական թվականների վերջերին եւ երեսնական թվականներին նրանց միացան, ավելի ճիշտ՝ գրական հաջառու կենդանություն ստացան արաբական այլ գաղութներ՝ Սիրիա-Լիբանանի գլխավորությամբ, եւ Բալկանները, եւ, այսպէս, անցնող տարիների հետ՝ բովանդակաւ Սփյուռքը:

ԱՆՈՒՇ ԱՐԱՍԱՐՅԱՆ

«Ակունքի» ակունքներում

ջով ընդամենը մի քանի քայլ առաջ տանող «մժույզը» այս անգամ ոչ թէ կանգ առավ, այլ կտրուկ փորձեց հետ գալ: Արդյունքում ձին չըջած վիճակում գրեթէ կախվեց ճոճվող նեղիկ կամրջի վրա: Անուշիկը, մետելով փնջած ծաղիկները, մեր կողմը վազեց: Սարասիախառն ճիչերի տարափի տակ Գրիգորը հասցրեց ոտքերը հանել ասպանդակներից եւ մի կերպ փրկվեց «հանուն սիրո» զոհվող հեծյալի դառն ճակատագրից, իսկ «մժույզը»... իր ողջ մարմնով գահավիժեց ձորով անցնող գետի սուրայր քարաժայռերի վրա:

Հետո... կարելի է ասել՝ հրաշք կատարվեց, քանզի անդնդից բոլոր տղաների ուժերով մի կերպ վերեւ հանված թրջված ձին... սկսեց հանգիստ արածել՝ ախորժակով ճաշակելով ձորափի հյութեղ կանաչը: «Որ արածում է, ուրեմն ամեն ինչ լավ է»,– եզրակացրեց անտառապահը եւ բացատրեց, որ, բարեբախտաբար, ձին ուղիղ մեջքին կապած մետաղյա թամբի վրա էր ձորն ընկել:

Շարունակելի

Արտակ ՎԱՐԴԱՆՅԱՆ

**ՔՐԻՍՏՈՆՅԱ
ԴԱՅԱՍՏԱՆ**

Կրոնական, մշակութային,
լրատվական երկշաբաթաթերթ

Հիմնադիր՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Հրատարակիչ՝
«Քրիստոնյա Հայաստան»
թերթի խմբագրություն

Գլխավոր խմբագիր՝
Աստղիկ Ստամբուլյան

Գրանցման վկայական՝ 624
Խմբագրություն հասցեն՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Հեռախոս՝ (010) 517 280

Էլ. փոստ՝ qristhay@etchmiadzin.am
astghikstam@gmail.com

web կայք՝
krishayas.wordpress.com

Ստոր. տպագր. 15.10.2021 թ.

Տպաքանակը՝ 1225